



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



22273







357

ՅԵՆՏԻՍԵՆՈՒԹԻԿՆ

ԷՆԶԻՆ

8

—



# ՈՎ ՄԱՐԳ

ՀՐԱՇԱՎ ԳԱՏԿԵՐԳ

ԵՒ

ՄԻԱՆՁԵԼԻ ՁԵՌԱԳՈՐԾԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ԹԻ ՅԱՆԿԱՍ ՏԵՍԱՆԵԼ ԶԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ԲՈ՛Ց

ԵՒ ՃԱՆԱՁԵԼ ԶԱՐԺԱՆԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԲՈ՛Ց

ՄԱՆՔ Ի ՅԱՆԳԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ ԻՄՈՅ

ՅՈՐՈՒՄ ԳՏՅԵՍ ԶԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԲՆԱՂ ԳԱՏԿԵՐԳ ԲՈ՛Ց

ԵՒ

ԾԱՆԵՑԵՍ

ԹԻ ՈՐՊԻՍԻ ԱՐԺԱՆԱՌՈՐ ԱՐԱՐԱԾ ՄԻ ԵՍ ԳՈՒ՛Ց

ԲԱՆԻ ՇՆՈՐՀՍ ՈՒՆԵՍ Ի ԲԵՁ ԲՈՎԱՆԳԱԿԵԱԼ

ԱՌ ԻՆՁ ՎԱԽՃԱՆ ՍՏԵՂԾԱՐ ԳՈՒ՛Ց

ՅՈՐՊԻՍԻ ՎԻՃԱԿ ԿԱՄ ՅՈՐ ԳԱՇՏՕՆ ՀԱՍՏԱՏԵՑԱՐ

ԵՒ

ՈՐՊԻՍԻ ՃՈՒՌՈՒԹԵԱՄԲ ՄԵԾԱՆԱՍ

ԸՆԴ ՆՄԻՆ ՏԵՍՅԵՍ ԵՒՍ

ԹԻ ՄԻՆՁ ՅՈՐ ՎԱՅՐ ԶԳԻ ԳԱՏՈՒՀԱՍ ՆՈՐԱ

ՈՐ ՄԵՂՕՔ ԵՂԾԱՆԵ ԶԳԱՏԿԵՐ ԻՅԻՆ

ԵՒ ԱՆՄՏՈՒԹԵԱՄԲ ԱՆԱՐԻԷ ԶԱՐԺԱՆԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԻՐ՛Ց

ԱԳԱՍՑ ԱՌՆԵ ԶՇՆՈՐՀՍՆ

ԽՈՏԱՆ ԱՌՆԵ ԶՎԻՃԱԿՆ

ԵՒ

ԱՐՀԱՄԱՐՀԻ ԶԳԱՇՏՕՆՆ

ՀԱՒԱՍԱՐԵԼՈՎ ԶԻՆԲՆ ԱՆԱՍՆՈՅ ԱՆՔԱՆԻՑ





# ՅԵՆՈՒՄԵՆՈՒԹԻՒՆ ԸՆԶԻՆ



ԵՐԵՐԵԱԼ Դ ԳԵՐՈՆ ԳԻՈՐԳԵԱՅ  
ԸԻԵՏԵԱՆ ՕՇԲԵՐԵԱՆՑ  
ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ ԸՌ ԴԻՄՍ ԻՐ

Ի քառապիս  
որ  
Ի ջալիս :

22273

ԱՐԴԵԱՄԲԲ ԵՒ ԾԱԽԻԻՔ  
ԱՌԱՔԻՆԱՍԻՐ  
ՅԱՐԳՈՅ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ  
ՅԱԿՈՎԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ :



Դ ԷԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄՍԻ,  
ԵՒ ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ  
ՍՈՒՐԷՆԵԱՆ :



Դ ԿԱԼԿԱԹԱ

Դ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԻԱՄԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ :

1846



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՔԵՄԱՐԱՆՆԷ

Ազնուհի Տիկին ՄԼԲԻԸՄ՝ Արժանաւոր կենակից

Ալայ Յակովբայ Յարութիւնեան՝

Արժանամե ծնոր Տիկին :

Արարածոց բարեխնամն Աստուած ետ մարդոյ  
զՏաղարդութի փառաց իւրոց , և եհեղ 'ի նա զերկ-  
նային շնորհս՝ զբանականութիւն , զիմաստութիւն  
և զՏանձար : Ետ նմա նա և զարտօնութիւն լինելոյ  
որդեգիւ Այ՝ ժառանգորդ երկնից և բաժանորդ  
յաւիտենական կենաց : Բայց ոչ ամենայն մարդ վայ-  
ելէ զայս Տաղարդութիւն փառաց , կամ ժառանգէ  
զայս լիութի շնորհաց , և կամ ստացեալ ունի զայս  
պարգև տիրական , այլ որ յանձին բերէ զկատարե-  
լութիւն բանականութեան , գործէ զբարիս և բա-  
նաւոր կամօք տիրէ 'ի վերայ անբարի յօժարութեանց  
անսանձ կրից : Արպէս ահա դու՝ ով Տամեստաբարոյդ  
'ի կանայս և շնորհափայլ դուստրդ Եւայի , ազգի  
ազգի բարեմասնութեանց վայելչացեալ զարդուք՝ ոչ  
փայն վառեցար սիրով երկնածինն առաքինութեան ,  
այլ և գովելի օրինակաւ անձինդ՝ իբրև լուսանցոյց  
Տայելեալ՝ զայլս 'ի նոյն սէր իրախոսեալ յորդո-  
րեօ յակումբօ ընկերակցութեան : Արով հիւսեալ  
կատրես 'ի գլուխ քօ զթագ անթառամ փառաց՝ 'ի  
դէպ եկեալ քեզ երանական բան իմաստնայն , թէ  
կին ժրագլուխ պսակ է առն իւրում :

Այլ արդ՛ ո՞վ բարետէր Տիկին՝ որ արժանապէս մեծարեալ վերապատուիս՝ ի մէնջ իբրև զմայր ըստ հագւոյ՝ իրաւասիրութիւնն ստիպէ զիս վերընծայել առաքինասիրութեան ձերում զայս փոքրիմաց զուզնաքեայ աշխատութիւն իմ՝ կոչեցեալ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ՝ զոր յաւուրս պանդխտութեան իմոյ՝ ի Բատավիա յօրինեալ շարագրեցի՝ ի զբօսանս միայնակեաց անձին իմոյ և յօգուտ համարիւն բարետէր ծաղկափթիթ պարմանեաց՝ և ծախուց տպագրութեան սորա բարեհաճեցար օգնական լինել ինքնայօժար առատաձեռնութեամբ՝ ոյր վասն և մեծապէս շնորհապարտ զանձն իմ խօստովանիմ յարգութեան ձերում :

Երախտագէտ մտօք յուսամ՝ ո՞ւ ազնուհի Տիկին՝ զի այս իմ ոտանաւոր գործ օակաւամասնեայ՝ իբրև փոքրիկ հայելի սղջամիտ բարոյականութեան՝ սատար լիցի յերկան ածել ընթերցանելեաց զհրաշագեղ կերպարանս աստուածահաճոյ առաքինութեանց՝ ընդ գրօշակաւ առաքինասէր քաջածանօթ պանծալի անուանդ :

Եւ ես մնամ ամենայն անածութեամբ՝

Արժանամեծօր Տիկին՝

Ամենախոնարհ ծառայ՝

ԳԷՈՐԳ ԱԻԵՏԵԱՆ ՁԱՔԱՐԵԱՆՑ :

Ի Բատավիա

Ի 1 Սեպտեմբեր 1845 :

## ՈՎ ԵՐ.

ՈՎ դու աղբիւր՝ անմահութեան,  
 անսպառ անսկիզբն՝ և անվախճան.  
 սոսա բրդիսող՝ ողորմութեան,  
 ըզբաղցր շնորհ՝ քո բարութեան:  
 Յորմէ և տաս՝ գոյնցս համայն.  
 տեսչութեամբբո՛ղ՝ Աստուածութեան.  
 ամէն սեռի՛ ըստ իւր ընութեան.  
 անտի զման՝ չափով զարժանն:  
 Արդ տնւր ինձ Տէ՛ր՝ զման բարեաց.  
 զիմաստութիւն՝ զբանն կենաց.  
 Տեռեկցայց՝ քոց սուրբ շաղայ,  
 առնել զքո կամն՝ ո՛վ Հայր գթած:  
 Ա՛րբիք ստորիք՝ էակք համայն.  
 որք են ստեղծեալք՝ ՚ի քէն միայն.  
 ոչ կարեն կեալ՝ ՚ի մի վայրկեան.  
 Թէ ոչ տածէ՛ խնամի՛ հայրականս  
 Չի դու պահես՝ զամենեւեանս.  
 քե հոլովին՝ շարժին և կեան.  
 քե խնամին՝ ամէն կենդան.  
 Ը՛ ՚ի քէն ընտրին՝ նոյնն արժանս.  
 Արա՛ զիս Տէ՛ր՝ արժան շնորհաց.  
 ըստ ընտրութեան՝ քոյոյ կամնայ.  
 որով ընթացք՝ իմնց կենայ՝  
 լիցի հաճոյ՝ քեզ Հայր գթած:

Է՛, որպիսի վառք՝ գոհութիւն.

Անեղ էիդ՝ վայել կարէ.

կամ զորպիսի՝ զօրհնեցութիւն.

քեզ մեծիդ տալ՝ յինէն հնար է:

Մինչ զի երկինք՝ պայծառութեամբն:

և մինչ երկիր՝ վայելչութեամբն.

են գործք ասեղ՝ քո տէրութեան.

որք յայանեն զկար՝ քո մեծութեան:

Արդ՝ տուր ինձ Տէ՛ր՝ ՚ի սուրբ սրտէ.

կարգաւ սրտիւ՝ զհզօր անուն քո.

՚ի բոլոր մտայ՝ համայն յանձնէ.

սիրել զքեզ՝ և զօրհնս քո:

Դու ստեղծեր զմարդ՝ յանարգ հողոյ:

է գերազարդ՝ ՚ի պատկեր քոյ.

զոր յարգեցեր՝ անբաւ շնորհօք.

և պատկեցեր՝ մեծաւ վառօք:

Ետուր զհոգի՝ իմացական.

զհամար՝ զիմաստ՝ զգահ պետական.

զվիճակ նմա՝ երկնից կայան.

և զվայելումն՝ վառքդ անլախձան:

Արդ՝ տուր ինձ Տէ՛ր՝ զկարողութիւն.

՚ի ճանաչել՝ զիմ էութիւն.

յանձնէս քերել՝ զանարգութիւն.

հօգույս նուիրել՝ զչքեղութիւն:

Մարդ կատարեալ՝  
վիշտ վայելէ զՏոբի խաղաղութեան.  
Եւ այն իսկ է երջանկութիւն իւր:

Բայց վայ այնմիկ՝  
Որ զմարդկութիւնն ՚ի բայ եղեալ  
վարի զօրէն անասնոյ.  
Այն իսկ լիցի յաւիտեանսն տանջանք իւր:

Այս տայծառ լոյս՝ արեգական.  
որ զուարթ առնէ՝ զամէն կենդան.  
չկարէ շնորհել՝ զսէր շղջիկան.  
զի խաւարն է՝ իւր սիրական:

Այստէս իմն՝ զՇնորհս երկնային.  
որ տայ մարդոյ՝ զանմահութիւն.  
չկարէ շնորհել՝ զայս պարգև նմին.  
որ անարգէ՝ զիւր մարդկութիւն:

Որ մոլեալ է ՚ի չար գնայս.  
և հէշտանայ՝ յախտս մեղաց.  
անշուշտ գտցէ՝ և նա յանկարծ.  
զանթիւ վիշտ իմ՝ որ ՚ի սին գրած:

Մեն լոյք փափուկ՝ ՚ի գիրկս ծնողաց։

յոյժ քաղցրացաւ՝ սէր այս կենաց։

յոր մղէալ քո՝ մնացեր անկամ։

զբուն բարիդ՝ Թողեալ ՚ի բայ։

Ոչ յուշ անէր՝ զվիճակդ ընտիր։

զԱստուծոյ շնորհս՝ զպարգև և զձիր։

որ արար զքեզ՝ մարդ հոգեկիր։

հաղորդ բարեացն՝ հանդիսադիր։

Զորս փոխեալ քո՝ ընդ անյաւորին։

եսուր ՚ի բայ՝ զտից հօր վեհին։

անկար ՚ի վայր՝ յոյժ ստորին։

մինչ հաւասար՝ գոլ անբանին։

Ոչ անսպեր՝ ամենեկին։

բարի խրատուց՝ քո ուսուցչին։

որ քարոզէր՝ քեզ զբուն բարին։

և յորդորէր՝ կալ ՚ի նմին։

Մի բնու յուսար՝ սահր բողբի։

որ լոկ շնորհէ՝ զինչա աշխարհի։

մի ՚ի բազուկ՝ հզօր իշխանի։

որ լոկ շնորհէ՝ զփառս աշխարհի։

Զի այս բոլոր է աղցաւոր։

կենաց մարդոյ՝ փորձանաւոր։

ոչ հոգեկան՝ այլ մարմնաւոր։

ոչ տեւական՝ այլ անյաւոր։

Զի՛նչ են ոսկի՝ արծաթ սկուրբ։

բայց գիրաք հողոյ՝ յաւէտ փայլունք։

որք վասն հողւոյդ՝ չունին արդիւնք։

այլ վընաս խոջ՝ և մտաց յուզմունք։

Զի զգանձողին՝ սիրտ բանասրկեն։

բազում ցաւօք՝ զնա մաշեն։

կորուստ և շահ՝ ոյնց անդադար։

զբանաւորն՝ փոխեն առ այլ։

Բայց լուր ինձ դու՝ զոր Տէր արար։

իմաստութեամբ՝ գերակատար։

զի նա տեղեակ՝ քում Թոյլ բնութեան՝

զզոհարս զգանձս՝ արկ ՚ի խոնարհ։

Եր 'ի ներքոյ՝ ոտից մտրդեան.  
 Թաղեալ 'ի հողս՝ իբր անպիտան.  
 որով տայ մեզ՝ 'ի միտ առնուլ.  
 Թէ յարգ նոցա է անարժան:

Ահունք 'ի քեզ՝ հոգիւ լիցի.  
 պայծառ փայլուն՝ գործով բարեաց.  
 ոսկի արծաթ՝ արդիւնք լիցի՝  
 քոյ բանաւոր՝ գործաւնէ լեաց:

Սահայն բազումք՝ զյս ոչ գիտեն.  
 և ոչ երբէք՝ զմտաւ ամեն.  
 անյագ սիրով՝ 'ի կեանս բոլո՛ւ  
 կուտել զգանձս՝ միայն միտեն:

Ուստի չարիքն՝ որք ծնանին.  
 անբաւ վտանգք՝ որ հետեին.  
 զվիշտ գառնութեան՝ ամեն անձին.  
 բազմաց այլոյ՝ և գանձողին:

Որդիք 'ի հարց լինին բաժան.  
 ոյրիք և որբք՝ ձգին 'ի տանջանս.  
 կողոպտութիւնք՝ յամենեսեան՝  
 զրհանք և խաբք՝ 'ի բանս համայն:

Հարց յորս փոքու՝ հերիքանան.  
 հաճ ընդ իւրեանց՝ վիճակ գնան.  
 նոքա սնտտեացս՝ տեղի չտան.  
 որով և միշտ՝ երջանիկ կեանս:

Նոքա ուրախ՝ զօրն ամենայն.  
 պարգևողին՝ միշտ փառս տան.  
 որ զպէտս նոցա՝ չսխտով կշռեաց,  
 և գթութեամբ՝ զարժանն շնորհեաց:

Յոյս նոցա է՝ միշտ տուօղն կենաց.  
 և բերկրութիւն՝ արդիւնք բարեաց.  
 սարսին դողան՝ յահէ հզօրին.  
 և գրեն 'ի սիրտս՝ զօրէնս նորին:

Թէ են 'ի խորս՝ թշուառութեան.  
 Թէ 'ի կատար՝ երջանկութեան.  
 ո՛չ դառնանան՝ ո՛չ վիքանան,  
 սրտիւ օրհնեն՝ զԷն անասնման:

- Որ սքանչելէօք՝ զերկինս արարօ  
 զարմանալէօք՝ զայս տարր աշխարհօ  
 զաստեղս զլուսին՝ և զարեգակօ  
 զնոյլ զյամաք և զգոյս համակօ
- Եւ համայնից՝ եղ զսահմանս  
 իւր կառաւար՝ ձեռն մեծութեանս  
 կեան և շարժին՝ շունչք ամենայնս  
 խնամօք նորին՝ մեծ տէրութեանս
- Ունին նոքա՝ զսիրտ մի հաստատօ  
 զհոգի ուղիղ՝ իրաւարարօ  
 որք յիւրս յօտարս՝ ՚ի ճոխ յաղքատօ  
 ոչ այլայլեն՝ զօրէնս արդարօ
- Չունին նախանձ՝ առ ինչ առ գահօ  
 որք են բարիք՝ մեղ բացակայօ  
 սէր աշխարհի՝ և փառք մարդկանս  
 ունայն ինչ են՝ յաչս նոյս
- Առ ինչ օգուտ՝ ասեն կապելօ  
 զիղձ և զկամս՝ ընդ այնպիսեայօ  
 որք ոչ կարեն՝ քեզ հաշորդելօ  
 զաներկեան՝ կեանս վայել
- Այսօր քոյ է՝ ոսկւոյն գումարօ  
 վաղիւն լիցի՝ այլոյ համարօ  
 այսօր քոյ է՝ թագ ոչ՝ նարարօ  
 վաղիւն անկցի՝ ՚ի ձեռս օտարօ
- Քեզ օրինակ՝ կալ զՔարելոնօ  
 զքաղաքայ՝ երևելինօ  
 յորմէ ելին՝ արք մեծանունօ  
 զինքեանս ազգայ՝ տեսքս արարինօ
- Եւ զԵգիպտոս՝ զերկիրն հինօ  
 ճախ և առատ՝ ամենինօ  
 որոյ զիւտ փառք՝ և շքեղութիւնօ  
 յաշխարհ բոլոր՝ քարոզէինօ
- Եւ զՄահեդոն՝ զքաղաքն հռչակօ  
 գլուխ համօրէն՝ քաջայ և պսակօ  
 որ ձգեայ զուր իւր՝ ծագայ ՚ի ծագսօ  
 և բոլորից՝ լեալ յաղթանակօ

Յաւետ զՀոռով՝ զմայրն քաղաքաց։  
 զօրէնսդիրն՝ ամէն տեղեաց։  
 որ բարձրացեալ՝ փառօք մեծաւ։  
 զաշխարհս բոլոր՝ ընդ բռամբ էած։

Տես և զմեր՝ զհայրենին։  
 որ ոչ պակաս՝ քան զսոսին։  
 բարձր գահիւ՝ փառաւորեալ։  
 պայծառ փայլեր՝ իբրև զարփին։

Ո՛վ զՆոր են այժմ՝ այնք ամենայն։  
 որք զերթ զխաղ՝ Թատրոնական։  
 յուրին զտեսս՝ ունայնութեան։  
 և ընդ հողով՝ ամփոփեցան։

Չի հողմ ուժգին՝ փորձանք արկածք։  
 հնչեաց սաստիկ՝ յայնս յանկարծ։  
 խլեաց զարմատն՝ ընկէց ՚ի բաց։  
 զտեղին իսպառ՝ եդ աւերած։

Մինչ յայս վայր այնք՝ զորս դու լուար։  
 բարիք էին՝ ՚ի մէնջ օտար։  
 որք վասն հոգւոյդ՝ չեն օգտակար։  
 յաւտ կեանց՝ քոյ խռովարար։

Որ թէ միտես՝ ունիլ զնոսա։  
 նախ խորհես՝ դու՝ զնոյն վախճան։  
 թէ չեն վասն քո՝ այնք յարակայ։  
 որք վասն այլոյ՝ ունայնացան։

Սոյնպէս իմա՝ զայլն ՚ի կարգին։  
 որք առ մարմինդ՝ վերաբերին։  
 առողջութիւն՝ կարողութիւն։  
 գեղեցկութիւն՝ ալլ հաճելիք։

Բայց սրբա ևս՝ չեն յուսալի։  
 զի ոչ տեսն՝ ՚ի բում մարմին։  
 Ընկացք նոյն՝ փոփոխական։  
 դնեն զքեզ՝ անհիմն կայեան։

Չինչ է այս մեր՝ առողջութիւն։  
 բայց չորս հիւթոյ՝ կայակցութիւն։  
 յորոյ թէ մին՝ չէ բարեկարգ։  
 խառնի բոլոր՝ մարմնոյ մեր կարգ։

Նայեանց յաշխարհս՝ լայնատարած.

գտցենս դու զոք՝ որ չէ յաւած.

առ հասարակ՝ յախտ ինչ անկած.

ոմն ան ոմն վայ՝ կան միշտ ՚ի լայ:

Մի՛ ՚ի հասակդ՝ պարծիր երբէք.

թէ վէհանձն ես՝ առոյգ և զուարթ.

և մի՛ յոյժ քոյ՝ անձին երբէք.

եթէ իյես՝ գերթ Գողիաթ:

Ո՛ր է Ներթովթ՝ վաթսուն կանգնոյ.

տիրօղն համայն՝ սզգին հնոյ.

ընդ որ մրցեալ՝ Հայկայ մերոյ.

տապաստ էարկ՝ նետիւ իւրոյ:

Կամ Գողիաթն՝ բարձր և հզօր.

Եբբայեցւոյն՝ յոյժ ահաւոր.

զոր խաչնարած՝ մանուկն աեզօր.

պարսաքարիւ՝ արար գլօր:

Ո՛ր և Սամիտան՝ այր գերուժեղ.

կամ Հերակլէս՝ կարի զօրեղ.

որք քաջութեամբ՝ գերազանցեալ.

զաշխարհ համայն՝ զարմացուցեալ:

Ե՛ւ այլ բազումք՝ նման սոյին.

գարուց ՚ի դարս՝ յողգաց ելին.

որք բարձր հզօր՝ և քաջ էին.

բոլորքն մահու՝ եղեն բաժին:

Ձի՛նչ է և այս գեղեցկութիւն.

բայց թէ ծաղիկ՝ առոյգ մարմնոյ.

որ ընդ այգուն՝ է յոյժ զուարթ.

ւընդ երեկոյն՝ անպիտան յարդ:

Թէ վտանգաւոր՝ է սա կենաց.

մեզ Հեղինէ՛ գոյ օրինակ.

որ էր պատճառ՝ մահուան բազմաց.

յաճիւնս փոխեաց՝ զՏրոյա քաղաք:

Կամ Շամիրամ՝ տիկինն հզօր.

գերեալ ՚ի գեղ՝ մեր Արային.

զընտիրս Հայոց՝ մաշեաց յիւր սուր.

անչուք արար՝ զմեր հայրենին:

Եւ այլ բազումք՝ սոյնօրինակ՝  
գեղով գերեալ՝ գերեւելիս.  
եղեն խափան՝ բազմօրինակ.  
վսեմ գործոյն՝ ՚ի հայրենիս:

Զգայական՝ քոյ հեշտութիւն՝  
որով բերկրիս՝ ընդ վայելս նորա.  
փութով փոխի՝ ՚ի դառնութիւն.  
անտեսական՝ սիրտիսք նորա:

Մինչ հեշտանալք՝ քաղցու մեղու.  
նա ինքն զմեզ՝ ՚ի հաղթս կալնու.  
սաստիկ ցաւօք՝ զմեզ տանջէ.  
քարշեալ ձգէ՝ ՚ի գոգ մահու:

Եւ զինչ այս կեանք՝ վայրկենական.  
որ անցանէ՝ իբրև զտուեր.  
ոչ հօյի նա՝ ՚ի տիս մարդկան.  
նոյնպէս է տղայ՝ որպէս և ծեր:

Մինչ պսակիս՝ ծաղկով կենաց.  
կայտառ մարմնով՝ ՚ի մէջ բազմաց.  
խորշակ տապոյ՝ հոգմ հարաւոյ՝  
հասեալ բառնայ՝ զկեանսք ՚ի բաց:

Զմարմինդ առնէ՝ գի անկենդան.  
զոյս՝ զգործդ՝ թողու խափան.  
զրկեալ յընչից՝ ը՛ի սիրելեացդ.  
Թաղիս ՚ի հող՝ դիւրեղծական:

Այսչափ բարիք՝ որք յիշեցան.  
էին բարդի՝ և մարմնական:  
որք չետուն համ՝ բարեաց հոգւոյ.  
երանական՝ երջանութեան:

Զի չէին այնք՝ քեզ բերկրական.  
կամ ապահով՝ և տեսական.  
զի ելք նոցա՝ և շար վախճան.  
միշտ առնեն զմարդ՝ աւաղական:

Թող ինձ օւրեմն՝ զայն երգ երգել.  
որ գերագոյն՝ է ւօգտաբեր.  
յորում բնակին՝ բուն բարիք մեր.  
և քնջ կշռին՝ ելք կենաց մեր:



**Ա**յնք են բարեք՝ հոգւոյ միայն.  
որք սեւհական՝ ասին մարդկան.  
զի ընդ հոգիս՝ ելով նոցայն՝  
մեան անմահ՝ ՚ի յաւիտեանս

**Խաղաղաւետ՝ վայելք նորա.**  
և յաւիտեան՝ պարգևք նորա.  
համեստութիւն՝ և զուարճութիւն.  
են յաղթական՝ շնորհք նորա:

**Չորս ունի մարդ՝ գործով բարի.**  
համեստ վարուք՝ առ արքինի.  
որով լինի՝ նա երջանիկ.  
և կատարեալ՝ երանելի:

**Որ ունի զայս՝ ունի զհամայն.**  
անախտ կենօք՝ պայծառացեալ.  
միշտ գոն՝ խաղաղ և ողջամիտ՝  
հոգևորօք՝ նա շատացեալ:

**Բայց թէ ոյք են՝ այնք և քանիք.**  
յինչ աստիճան՝ լառ ինչ վախճան.  
ի՛նչ ցանկալի՝ և գեղեցիկ՝  
ունիս լսել՝ ոչ անագան:

**Այլ նախ լըր դու՝ զճանօթութիւն.**  
հոգւոյ մերոյ՝ բացատրութեան.  
զմասանց նորին՝ զկարողութիւն.  
զորս հոգի մեր՝ կըրէ յինքեան:

**Որով բացի՝ քեզ պողոտայն.**  
և դուռն կենայ՝ երանական.  
յոր ընթացեալ՝ սրտի մտօք.  
լրումն տայես՝ բարեացն համայն:

**Հոգի մեր է՝ անմահական.**  
պատկեր վեհին՝ Աստուածութեանս.  
շնորհօղ զսկիզբն՝ կելոյ մարդկան.  
հաստեալ առ կեանս՝ երանական:

**Արար Աստուած՝ զսա բանական.**  
եդ ՚ի մարմին՝ մեր զգայական.  
իբր իւր գործի՝ և գործարան.  
և կարգադրի՝ կրից համայն:

Ի յայսմանէ՝ ծագի մեր բան,  
մասունք երկու՝ գան յերևան,  
զգայական՝ և բանական,  
իբր տէր՝ ծառայ՝ ի միում տան:

Զգայական՝ և բանական՝  
մէն մի՞ունին՝ յատուկ յինքեան,  
զերկուս բնական՝ կարողութիւն,  
լմբունող և՛ բաղձողական:

Ըմբունողն՝ մարմնականին,  
կարողութիւն՝ ինչ է ստորին,  
և կամ թերատ՝ միտք նիւթական,  
զգայական՝ հոգւոյ մասին:

Սա զձև առնու՝ ի պատկերէն,  
առարկայից՝ հինգ զգայութեանց,  
մայուն գունովք՝ պայծառ նկարէ՝  
զերևոյթս՝ այնց զգայութեանց:

Բաղձողական՝ ըն մարմնական՝  
է զօրութիւն՝ երկրորդական,  
նոյն իսկ մասին՝ զգայական,  
զհետ երթայ՝ իբր նիւթական:

Սա առնու միշտ՝ զիւր զձաշակ,  
ի պատկերէ՝ կերպարորեալ,  
առ որ մատչի՝ ըլձիւ անյագ,  
ընու զբաղյր՝ զիւր ակտորժակ:

Սա հրէշ ինչ է՝ երկկերպարան,  
սառ ըն և հուր՝ ի մէջ բնութեան,  
որ ներհական՝ յերկուց շարժմանց՝  
յուզի առ այս՝ միշտ և առ այն:

Զի բարկութիւն՝ և ցանկութիւն՝  
գոլով իւր կիրք՝ Վիզ սեպհական,  
նոքօք մատչի՝ վարել զբան,  
թէ անախորժ՝ Լախորժական:

Երբ առարկայք՝ են տրամական,  
նա բարկութեամբ՝ ի բոց փախչի,  
և նոյնք յորժամ՝ են բերկրական,  
ցանկականան՝ զհետ պնդի:

- Կարողութիւնքս՝ այսք մարմնաւոր  
 որք անբանից՝ են զուգականո.  
 Է զի Թաղին՝ սաս ՚ի տիրմ՝ խոր.  
 Է զի յառնեն՝ յերկնից կայանս:
- Երբ հնազանդին՝ գործնականին.  
 և հետեւին՝ տեսականին.  
 Բէ խոտեն զկարգ՝ բանականին.  
 կալով հնազանդ՝ սաստից նորինս:
- Յայնժամ լինին՝ այնք բանական.  
 կամ հոգեղէն՝ ւանմահական.  
 որոց խառնեալ՝ ընդ հոգւոյ բան՝  
 և ընդ հոգւոյն՝ ՚ի վեր սլանանս:
- Բայց Թէ հետտեն՝ անարգանօք.  
 իշխանութեան՝ հոգեկանին  
 և զօրացեալ՝ աշխարհայնութի.  
 կամայ՝ մտայ՝ զդէմ՝ կալլին:
- Յայնժամ տես դու՝ զկորուստ մարմնոյ.  
 որք յախորժից՝ յայնց յառաջ գան.  
 զի ընդարձակեն՝ զիղձս մարմնոյ.  
 սու ստոյգ և սուտ՝ անզանազանս:
- Քի առաջնորգ՝ միտքն նիւթական՝  
 չունելով զիսկ՝ ձե պատկերին,  
 յինչ ճանապարհ՝ յոր ձգի նայն,  
 սոքա երթան՝ զհետ անխաւիանս:
- Ոյ սակս գործք՝ նոցին և բան.  
 լինին համայն՝ անասնական.  
 յինչ և իցէ՝ յախտ զանկական.  
 սիրով յարեալ՝ յերձումն երթանս:
- Որք իբր տգրուկ՝ անյագ արեան.  
 ոչ շատանան՝ զեղծ ցանկութեամբ.  
 և յսիրացեալ՝ ՚ի զոտութեան՝  
 եղծեն զպատկերս՝ Աստուածականս:
- Կամ երբ չգտեալ՝ զբաղձալին,  
 վառին զինու՝ զասմնականին.  
 և բարկացեալ՝ ընդդէմ՝ անձին՝  
 վերջ տան կենաց՝ անցաւորինս:

Այլ ըմբռնող ըն բանական  
է զօրութիւն՝ իմացական.  
կարողութիւն՝ գերբնական.  
հոգեւոր և՛ վսեմական:

Զարմանալի՛ ձիրս Աստուծոյ՝  
որ բաժանէ՛ զմարդն յանասնոյ.  
եղեալ ՚ի մեզ՝ է զարդ հոգւոյ.  
արթուն հսկող՝ ներքին մարդոյ:

Այս է միտք մեր՝ վսեմական՝  
քննող դիտող՝ զբոլոր մեր բանս  
դասող ՚ի չափ՝ սահմանական.  
վարող ՚ի գործ՝ անտեսական:

Զի պատկերաց՝ յայնչ նիւթական  
որ ձևայեալ՝ ՚ի զգայութեանչ.  
առեալ նկարէ՛ նորոգ յինքեան.  
զանչինչ պատկեր՝ իմացական:

Որ և գանձեալ՝ զայն ամենայն՝  
ի պահարան՝ յիշողութեան.  
ունիլ ՚ի ձեռն՝ կազմ և պատրաստ  
դնել ՚ի գործ՝ յիմաստ և՛ ի բան:

Բարձրողական՝ ըն բանաւոր.  
կարողութիւն՝ է գլխաւոր.  
միակ իշխան՝ դշխոյ հզօր՝  
ի տան հոգւոյ՝ մեր հրամայող:

Այս է կամք մեր՝ ազատ արձակ.  
ընտրող մերժող՝ ինքնախորժակ.  
ազատօրէն՝ և համարձակ  
մտաց զառարկայս՝ վարող համակ:

Զի զոր ինչ միտքն՝ դնէ առաջի.  
պատկերօրքն՝ իմանալի.  
հրաման տայ սա՛ զգայականին.  
ի գլուխ հանել՝ վտւթանակի:

Բայց զայս կարգ տան՝ հոգեկանին՝  
չէ մարթ ուղղել՝ ըստ պատշաճին.  
Թէ չիյէ յայնմ՝ այլ զօրութիւն  
կառավարիչ՝ ամէն գործոյն:

Իսկ երկնային՝ մեծ տեսչութիւնս.

գթայեալ ՚ի մեր՝ Թոյլ բնութիւնս.

եղ ՚ի նա չորս՝ իշխանս արթունս  
անտեսք հոգւոյ՝ սանձօղբ մարմնոյ:

**Ա**ռաջինն է՝ խոհեմութիւնս.

բնակեալ ՚ի վիտս՝ դէտ իմաստունս.

անտես արդար՝ ՚ի տանս հոգւոյ.

և խիստ ուղիղն՝ անսաստ մարմնոյ:

**Զայս մարգարիտ՝ ազնիւ անգինս**

թէ ամփոփես՝ ՚ի քոյ հոգինս.

ոչ ձեռք գողոյ՝ անդ հասանենս.

ոչ որդք ծախիչք՝ սպաղանեանս:

**Այլ օր առուր՝ գեր քան զարիփն.**

պայծառ փայլի՝ ՚ի քում անձինս.

որով զգաս՝ դու բերկրութիւնս.

երանաւէտ՝ Ադին դրախտինս:

**Սա ինքն է խրատ՝ բարոյականս.**

չափ կանոնիչ՝ վարուց մարդկանս.

սա զբնութիւն մեր՝ գազանականս.

ածէ ՚ի կարգ՝ արդարութեանս:

**Սա պարգևէ՝ քոյին մտայ.**

լապտեր շորհայ՝ զբանն կենայ.

դնէ առաջի՝ և քոյ աչայ.

զօրինակ՝ խրատ՝ և զփորձ բազմայ:

**Խորհուրդք սորա՝ են թիկն մեծայ.**

փառք և պսակ՝ Թագաւորայ.

նախամեծար՝ մեծամեծայ.

և կարգադրիչ՝ հասարակայ:

**Մի կար սսէ՝ զերթ զայր թմբբած,**

երբ ոք մեկնի՝ յաստի կենայ.

զի նոյն օր է՝ քեզ ևս պահած.

որ հասանէ՝ ՚ի քեզ յանկարծ:

**Մի կարծեր թէ՝ գանձ բազմագինս**

կամ զօրութիւն՝ քոյոյ բազկինս.

կամ վէհութիւն՝ քոյոյ անձինս.

սաստել կարեն՝ մահու ճայինս:

Ոչ Թագաւորք՝ ոչ խումբք մեծաց,  
 ոչ ընչաքաղցք՝ դասք հարստաց,  
 ոչ իմաստունք՝ կամ ջոկք ազիտաց,  
 կարեն փախչիլ՝ յայնր ժանեաց:

Ուրեմն ընդ դու կազմ՝ և պատրաստ,  
 գործեա՛յ զբարիս՝ մինչ ես դու աստ,  
 զի թէ գայ նա՛ յանկարծակի,  
 Գացէ զքեզ՝ ՚ի չու պատրաստ:

Չառնէ հարուստ՝ ոսկիս արծաթ,  
 Թէ սիրտ քոյ է՝ աբաս, աղքատ,  
 Թէ և շատ գանձ՝ քեզ կուտեսցես,  
 դեռ հոգայեալ՝ յոգւոյ հանցես:

Ընդ դու սրտի՛ փորթամ, հարուստ,  
 քսջ շատայեալ՝ ընդ քոյ ապրուստ,  
 այս լիցի քեզ՝ կեանք կատարեալ,  
 և ՚ի ցաւոյ՝ դու յար զէրծեալ:

Միշտ մահ մեր կայ՝ ՚ի դուրս պատրաստ,  
 որ կէտ առ կէտ՝ առնէ մեզ ազգ,  
 Թէ յայն շաւիղ՝ է մեր ընթացք,  
 յորմէ սխալիլ՝ ոչ ոք եկաց:

Եթէ բազմիս՝ ՚ի բարձր գահի,  
 և ալլէ նստին՝ ՚ի ցած գետնի,  
 մի մուտ մի այն՝ է յայս աշխարհ,  
 մի է և ելք՝ հասարակաց:

Ապա է՛ր է՝ քո բարձրութիւն,  
 փառք՝ պատիւ՝ գահ և մեծութիւն,  
 կամ զինչ օգուտ՝ քո տքնութիւն,  
 սու ՚ի ստանալ՝ զճոխութիւն:

Մինչ ամենայն՝ է զուր ունայն,  
 և անօգուտ՝ առ քո վախճան,  
 զի բռնաւոր՝ մահն դաժան՝  
 ոչ ընտրէ զփոքր՝ զմեծ, զիշխան:

Ուրեմն խնդրեա՛ հոգւոյդ զճարս,  
 մի՛չ ՚ի ձեռնն՝ ունիս զկար,  
 առնել զնա՛ ուղիղ արդար,  
 բարեաց գործոյ՝ արդիւնարար:

Լէր դու առաք' և բարերար,  
 տառապելոցն՝ իրաւարար,  
 գթա՛յ յաղքատս՝ միշտ հայրաբար,  
 խնամեա՛ զայրիս՝ զորք և զօտար:

Մի՛ թախիւր դու՛ զարիւն արդար,  
 մի՛ գրաւեր՝ զինչ օտար,  
 մի՛ կեղեքեր՝ զբոյ զեղբայր,  
 կամ՝ զրպարտեր՝ զնա չարաչար:

Զաստուած, զճնորդս՝ զընկերդ սիրեա՛,  
 զսիրտ, զոգիդ՝ ուղիղ արա՛,  
 մի՛ արաւցես՝ տյլում՝ զչարիս,  
 եթէ՛ կա՛նիս՝ քեզ զբարիս:

Լէր աշալուրջ՝ զգօն՝ բարի,  
 եթէ՛ իցես՝ ՚ի բարձր գահի,  
 եթէ՛ ՚ի ճոխ՝ գերդաստանի,  
 եթէ՛ յաղքատ՝ բնակարանի:

Զգեցի՛ր դու՛ զարգարութիւն,  
 պահեա՛ ՚ի քեզ՝ զօրէնս արթուն,  
 ՚ի բայ վանել՝ զանուղղութիւն,  
 և ՚ի սանձել՝ զանկարգ բնութիւն:

Բնկա՛ւ ՚ի քեզ՝ զարիութիւն,  
 հոգւոյդ շնորհել՝ զխաղաղութիւն,  
 պատկառ կալ միշտ՝ գործոց անարգ,  
 յանձինդ բերել՝ պատիւ և փառք:

Այսու կարես՝ բարւոք իշխել,  
 տանս պալատի՛ կամ տերութեանս,  
 քեզ խոնարհին՝ և հնազանդին՝  
 կին և զաւակք՝ ծառայք համայն:

Զոր ինչ առնես՝ նախ ճիշդ խորհեա՛,  
 ապա՛ ձեռն անկ՝ ՚ի կատարել,  
 զամէն բանիդ՝ վախճանն խորհեա՛,  
 համեստութեամբ՝ զօգուան նկատեա՛:

Մի՛ առներ ինչ՝ ՚ի քո պարծանս,  
 և մի՛ ՚ի զուր՝ մաշեր զկեանս,  
 զի սին պարծանքն՝ է՛ ճուխ ունայն՝  
 յամբողջ գործոյն՝ ապաւանան:

Չոր ինչ իցի՝ ՚ի վեր քան զկար՝  
մի գործեսցի՝ յիմարբար.

զի մի գոցես՝ զվախճանն չար՝  
քեզ և այլոյ վնասակար:

Կամ մնացի՝ գործդ անկատար,  
անչա՛հ, անբեր՝ անօգտակար.  
որով լիցիս՝ ծաղր և ծանակ.  
յիմարութեան՝ ցոյց և նշանակ:

Բան քո լիցի՝ իմաստութեամբ,  
քաջ խորհրդով՝ ուղիղ կշռեալ,  
զի՛ յարգեսցի՝ ակնածութեամբ:

Իբր սուրբ պատգամ՝ յերկնից իջեալ:

Մի լիցի այն՝ բնաւ բարկութեամբ,  
կամ պարծանօք՝ հպարտութեամբ.  
այլ թէ համեղ՝ հեղ և խոնարհ,  
արդարութեան՝ խընամատար:

Արե՛ժ խնդիր՝ վնասակարին,  
և վարձատրի՛չ՝ բարեբարին,  
աս և երկիւղ՝ անամօթին.  
պատիժ մահու՝ ստակրծնին:

Շահարար իսկ՝ քոյ ընկերին,  
և օգտակար՝ փոքու՝ մեծին.  
խրատ բարի՝ քոյ զաւակին,  
և յիշատակ՝ ճննդոց նորին:

Երբ հասցի քեզ՝ վախճան կենաց,  
խաղաղութեամբ՝ թողցես զաշխարհ,  
աստ աշխատեալ՝ յարդիւնս բարեաց՝  
լիցի ճաշակի՝ ՚ի կեանս օրհնեալ:

Քեզ պատրաստի՝ յերկինս հանդէս.  
պսակել զքեզ՝ արժանապէս.  
քեզ բրաբերոն՝ կայ յաղթանակ.  
արի գործոց՝ քոց փոխանակ:

Երկրորդ իմա՛ն՝ զարդարութիւն.  
նստեալ ՚ի կամս՝ դժխոյ արթուն.  
առ ՚ի սանձել՝ զնա յուղղութիւն.  
իրաւ առնել՝ ներքին մարդոյն:

Բազմաբեղուն՝ զայս ծառ բարի,  
 Եթէ անկես՝ ՚ի քոյ հոգի  
 Ի՛չ ՚ի ցրտոյ՝ ապականի.

Ի՛չ ՚ի տապոյ՝ բնաւ տոչորի:

Այլ օր առւր՝ յոյժ զօրանայ,  
 մինչև յերկինս՝ նա բարձրանայ.  
 որոյ պտուղ է՝ անմահութիւն.  
 շնորհօղ զստոյգ՝ վայելչութիւն:

Սա ՚ի ձեռին՝ կալեալ հսկէ՝  
 սուր և կշիռ՝ արդարութեան.  
 կշռէ զյանցուածս՝ պատուհասէ՝  
 արեւս՝ կաշառ՝ նմա են ունայն:

Սուլաւ օրէնք՝ ուղիղ պահին.  
 և տէրութիւնք՝ պայծառ փայլին.  
 սուլաւ իշխանք՝ յարգոյ լինին.  
 և Թագաւորք՝ արդար կոչին:

Սա տայ զերկիւղ՝ և զահ չարաց.  
 և զգողումն՝ ամբարշտաց.  
 անողում է՝ կամակորաց.  
 և վնասակար՝ անիրաւաց:

Տանիւ չկարէ՝ բարձրանտայ.  
 և յատկապէս՝ գոռոզ կամայ.  
 որք բռնայեալ՝ դաժան սրտիւ,  
 տիրել կամին՝ հեզ խոնարհաց:

Ատէ զգործ՝ անօրինաց.  
 որք հալածեն՝ զանմեղն՝ ՚ի բայ.  
 բայ փոյթ, ասէ՝ ո՛վ մոլորած,  
 տեսցես զքոյդ՝ չար կատարած:

Սա նկատէ՝ զսիրտ քոյ խոր.  
 Ճշդիւ քննէ՝ զխոհմունսդ բոլոր.  
 Եթէ մաքուր՝ կամ աղտաւոր,  
 նմին առնէ՝ զքեզ մասնաւոր:

Ատէ զսերմն՝ զոր ցանկեցեր՝  
 Եթէ ցորեան՝ Եթէ զրորմն,  
 զնոյնն իսկ՝ ունիս քաղել՝  
 մին քեզ բազմօք՝ առաւելեալ:

- Ձի անաչառ՝ փոքունց՝ մեծայ՝**  
 տայէ զիոխանն՝ ըստ արժանեաց՝  
 բարերարայ՝ զանբաւ բարիս՝  
 չարարարայ՝ զիւրեանց չարիս՝
- Յընչիցն առնէ՝ զնա անբաժին՝**  
 որ զրկէ զեկս՝ զորք և զայրին՝  
 մերկէ զպսակ՝ և զիառս նորին՝  
 որ յինքն գրաւէ՝ զինչս օտարին՝
- Ոչ խնայէ՝ կենաց նորին՝**  
 որ բառնայ սրով՝ զկեանս ընկերին՝  
 անհետ առնէ՝ զանուն նոցին՝  
 որք զայլն միշտ՝ խարդախեցին՝
- Անչափ խիստ է՝ նոցին վճար՝**  
 որք հատանեն՝ զտուն օտար՝  
 զսգատութիւնն՝ բառնայ խաղառ՝  
 մասնէ՝ ՚ի բանտ՝ անարգաբար՝
- Մեծ յանցանք են՝ երգմնազանցին՝**  
 կաշառառու՝ չարասիրին՝  
 համր զէզուն՝ միոյն առնէ՝  
 զարմատ մատանց՝ միւսոյն կտրէ՝
- Այսպէս առնէ՝ և շնացողայ՝**  
 որք պղտորեն՝ զմիտս կանանց՝  
 միոյն բառնայ՝ զլոյս աչայ՝  
 միոյն զզարդ՝ չքնաղ դիմաց՝
- Ձի յայտնեսցի՝ ճշմարտութիւն՝**  
 և ուսուսցի՝ արդարութիւն՝  
 Թէ որ ստէ՝ զօրէնս արդար՝  
 կրէ զպատիժ՝ նա չարաչար՝
- Չրպարտութիւն՝ չարախօսին՝**  
 և վատ խորհուրդ՝ անզգամին՝  
 պեղէ նոցա՝ զգուք խորին՝  
 զորս և ինքեանք՝ իսկ նիւթեցին՝
- Նախանձ ուրուք՝ ընդ ընկերին՝**  
 և ցանկութիւն՝ ընչից նորին՝  
 կնոջն՝ տան՝ և ծառային՝  
 ձգէ ՚ի հուր՝ զիւր չար ոգին՝

Ոչ ներէ բնաւ՝ համակորաց՝  
 որք ոչ գիտեն՝ զպատիւ ծնողաց՝  
 որոյ պատիժն՝ ՚ի վճար մեղաց՝  
 բարձրէ զկեանս՝ փութով ՚ի բաց՝  
 Եւ յանցանողն՝ յօրէնս վեհին՝  
 անսուրբ առնողն՝ զկիւրակին՝  
 ոչ գտանէ՝ զման և բաժին.  
 յիւրոց արդեանց՝ գործոց ձեռինս  
 Այն մեծ է և՛ մարդոյն այնմիկ.  
 որ մոռանայ՝ զիւր Տէր Աստուած.  
 զպաշտօն նորա՝ զփառս և զպատիւ.  
 եղեալ յանարգ՝ ինչ ստեղծուած.  
 Կամ որ անբան՝ իբր զանասուն՝  
 ՚ի խոր թաղի՝ ՚ի տգիտութիւն.  
 ուտէ՛ ըմպէ՛ ուրախանայ.  
 և պարարէ՛ զիւր ցանկութիւն.  
 Կամ որ յուսայ՝ յիւր մեծութիւն.  
 յանուն ՚ի շուք՝ ՚ի ճոխութիւն.  
 զտնակախեալ՝ զերկիւղ և զյոյս  
 զպաշտօնս զպատիւ՝ աստուածակոյս.  
 Ուստի գայ մահ՝ սուր ՚ի ձեռին.  
 առեալ զվճիռ՝ յատեան վերին,  
 ՚ի բաց կտրէ՛ զթեւ նորին.  
 բարձեալ իսպառ՝ զյոյս նորին.  
 Յայնժամ հոգին՝ կրել ունի,  
 զոր ինչ արար՝ դարձ արժանի.  
 մատնի ՚ի ձեռս՝ սասանային.  
 եղեալ բաժին՝ հրոյ գեհեմին.  
 Ուր ոչ հանգչի՝ ՚ի կտտանայ.  
 զորս միշտ կրէ՛ յանբուն որդանց,  
 կշտամբի յիւր՝ խղճէ մտայ.  
 անեալ ՚ի նա՝ սաստիկ հարուած.  
 Երբևէ չիք հար՝ ՚ի զերժանիւ.  
 և կամ երբէք՝ կարել հանգչիւ.  
 զի վճիռ է այն՝ աստուածական.  
 տանջել զնա՝ ՚ի յաւիտեանս

**Ե**րրորդն ասի՝ արիութիւն.

նախապատիւ՝ ամենեցուն.

քաջաց՝ հզօրաց՝ յոյժ ցանկալին.

և յասպետաց՝ մեծարելին:

**Թ**է զայս պայծառ՝ ազնիւ զրահ,

արկցես՝ ՚ի քո՝ անձին վերայ,

ոչինչ յուզմունք՝ աշխարհական,

քեզ հասուսցեն՝ վնաս և զեան:

**Ե**ւ ոչ հողմունք՝ փորձանական,

և կամ ալիք՝ զեղծ ցանկութեան,

սուզել կարեն՝ զկամոք բանական.

՚ի ծով աստեացս՝ յիղձ մարմնական:

**Ս**ովաւ սանձեալ՝ կարգաւորին,

կատարութիւն՝ ցասմնականին.

և բռնութիւն՝ ցանկականին.

՚ի կալ հնազանդ՝ բանականին:

**Ս**ա արգելու՝ զմեր բարկութիւն.

և զբռամբ անէ՝ զգոռոզ բնութիւն.

զերկիւղ՝ զկասկած՝ զվիշտ կենաց,

ուժգին վանէ՝ ՚ի քէն՝ ՚ի բաց:

**Ս**ա զդժուարինսն՝ ՚ի կեանս մարդկան.

զխոչ և զարգելս՝ դիւրին առնէ.

զհակառակ՝ զիղձ մարմնական,

կամոց մերոց՝ հնազանդ առնէ:

**Յ**ոչինչ գրէ՝ զերկիւղ սնտախ,

և զչարիս՝ անգութ բողբի.

կազմէ զսիրտ՝ մեր վէմ անշարժ.

տանել վտանգացն՝ աշխարհաշարժ:

**Ս**ա առնէ զքեզ՝ քաջ ախոյեան.

զէն անաւոր՝ հակառակաց:

սաստ և երկիւղ՝ ըմբոստ մարդկան.

և դիմամարտ՝ մոլեկանաց:

**Ե**լուեան ասէ՝ զքոյ զօրութիւն.

զպատճառ՝ զտեղի՝ զպատեհութիւն.

զի ընկճեսցես՝ զքոյ թշնամին.

առանց վնասու՝ քոյ ընկերին:

- Ո՛չ թոյլ տայ քեզ՝ խորհիլ զբանս  
 վառեալ ցասմամբ՝ մտօք անբանս  
 և ոչ զարիւն՝ քոյ թանկագինս  
 թափել ՚ի զուր՝ յառիթս ջնջինս
- Մի՛ վստահիր՝ թէ քաջ իցես  
 կամ թէ յաղթող՝ հզօր իցես  
 խորհեա՛ զվախճանն՝ զոր ինչ գործես  
 զի շահ լիցի՛ բազմայ և քեզ՝
- Կայ՛ պաշտպան դու՝ քոյ հայրենեաց  
 քաջ ճանաչող՝ սիրոյ ծնողայ  
 հաւատարիմ՝ քոյ իշխանայ  
 եդեալ զկեանս՝ յօգուտ բարեաց
- Մի՛ տրտնջեր՝ և մի՛ հէծեր  
 թէ հասանեն՝ քեզ դառն օրեր  
 մի՛ խիստ ցասնուր՝ կամ բարկանար  
 թէ յանմեղս դու՝ անարգեցար
- Ամենայնի՛ սիրով դու տա՛ր  
 համբերութեամբ՝ խոնարհաբար  
 որով չարի՛ն՝ դու յաղթեսցես  
 և զբարբիոն՝ յառանգեսցես
- Կա՛լ քեզ խրատ՝ և առաջնորդ  
 ՚ի գործս համայն՝ զխոհեմութիւնս  
 մտայ՛ կամայ՛ քոյ դի՛ր ուղղօրդ  
 զքոյ՛ նորին՝ զարդարութիւնս
- Թէ՛ հպատակ՝ ես հրամանի  
 փոքու մեծի՛ կամ իշխանի  
 մի՛ գործեսցես՝ անհրամանս  
 թէ և շահիս՝ զարդիւնս համայնս
- Թէ՛ կարգեալ ես՝ գլուխ ազգի  
 և կամ զօրու՝ պատերազմի  
 մի՛ մեծամիտ՝ հպարտութեամբ  
 ընկճեր զանգօրս՝ քով զօրութեամբ
- Այլ արթուն լեր՝ դու և զգաստ  
 հայր խնամող՝ և գթաւատ  
 չարաց պատիժ՝ երկիւղ և սաստ  
 բարեաց շնորհք՝ սէր բազմաւատ

Որով ստասցիս՝ քեզ անկեղծ գովե  
զանմահութեան՝ զկեանս օրհնեալ։  
յոր ցնծացեալ՝ բերկրիս հոգւով։  
երանութեան՝ որդի կոչեալ։

Մնայ արդ գիտեւ՝ զմիւս զօրութիւն  
զբարեխառնումն՝ մեր ցանկութեան.  
որ զջերմ՝ և զսառն՝ նորին բնութիւն  
ածէ՝ ի կարգ՝ միջասահման։

Այս ջինջ աղբիւր՝ հօրդ-ահասան  
թէ բղխեսցի՝ ի քոյդ հոգւոյ.  
ջուրն նորին՝ կենդանական.  
տայ զովանալ՝ քեզ յաւիտեան։

Եւ ջերմութիւն՝ արեգական.  
և սաստկութիւն՝ երաշտութեան.  
ցամաք առնել՝ ոչ կարեն զայն.  
զի՞ ի հոգիդ՝ է ակն բղխման։

Սա զհաճոյս՝ մեր մարմնական.  
և զամենայն՝ կիրս հոգեկան.  
դնէ՞ ի չափ՝ կանոնաւոր.  
զի մի միմեանց՝ բերբեր զգեան։

Կամ զիղձս մեր՝ հաճոյական.  
առարկայիցն՝ զգայական.  
առաջակայ և բայական.  
չափաւորէ՞ նա զամենայն։

Մի տրտմութիւն՝ կամ խնդութիւն,  
մի տառապանք՝ կամ զուարճութիւն,  
մի ծաղր՝ ծիծաղ՝ կամ հեծութիւն,  
ծնցին զանչափ՝ ցաւս հաճութիւն։

Սա արգելու՝ զշուայտութիւն.  
և զանառակ՝ արբեցութիւն.  
սա զվառաշ՝ պիղծ ցանկութիւն.  
փոխել ստիպէ՞ ի սրբութիւն։

Մի ասէ՛ զերթ՝ անյագ գազան.  
խճողեր դու՝ զքոյ զորովայն.  
որով հոգիդ՝ ծանրաբեռնի.  
և կերք մարմնոյդ՝ ի հուր փոխէ։

Չոր տէր շնորհեաց՝ քեզ ՚ի բարինս  
 պահել զհոգի՝ քոյ կենսականս  
 մի՛ փոխեր զայն՝ ՚ի թոյն չարինս  
 հոգւոյդ՝ մարմնոյդ՝ առիթ կորստեանս :

Չի սա ինքն է՝ մայր ծուլութեանս  
 և խանգարող՝ առողջութեանս  
 սա արծարծէ՝ զբորբոք մեղաց  
 զմարմինդ հոգւոյդ՝ առնէ գեհեանս :

Յայնժամ միտք քոյ՝ անբանանանս  
 և բարի կամքդ՝ անզօրանանս  
 չարին բաղձանք՝ ըն լւանանս  
 զքեզ արարեալ՝ իւր օթեանս :

Այո՛ ուտել՝ քո արժան է՝  
 զայն ամենայն՝ զոր Տէր ետ քեզ  
 բայց մի՛ աւել՝ քան զոր ՚ի կեալ  
 և այն ՚ի փառս՝ շնորհողին քեզ :

Արգել և դու՛ զարբեցութիւնս  
 որ մարմնոյդ վնաս՝ հոգւոյդ է թոյն  
 զի խանգարէ՝ զքոյ փոյթ և ջան  
 շրջէ զկարգ՝ հոգւոյ քոյ տանս :

Ըստ անգամ զքեզ՝ որ բանաւոր  
 փոխէ յանբան՝ ինչ շնչաւոր  
 կամ զնագելի՛ քոյ քաղցր բնութիւն  
 ՚ի դարշելի՛ վայրագութիւն :

Մինչ չէ միտք քոյ՝ արթուն զգաստ  
 զեղծ մոլութեանց՝ ես դու պատրաստ  
 զի անձնիշխան՝ կամքդ բանաւոր  
 այլ չէ տէր կրկնդ՝ անբանաւոր :

Ուրով ՚ի քեզ՝ դիւրաւ շարժին  
 ախտք ամենայն՝ ցանկականին  
 քեզ սատարէ՝ և ցասմեականն  
 առթել զվերս՝ ՚ի մահ անձինն :

Ո՛չ ամաչես՝ յամօթալեաց  
 զի ո՛չ զգաս՝ թէ զինչ գործես  
 պատրաստական՝ յար բարկանալ  
 զպարագայիցն՝ անփոյթ եղեալ :

Ո՛չ խնայես՝ յարիւն արդար,  
 երբ դու լինիս՝ զերթ խելագար,  
 զեղբայր, զընկեր՝ և զայր օտար,  
 քարշէս՝ ՚ի սուր՝ անխնայաբար:

Զի զինչ չարիք՝ Թարց գործելոյ,  
 երբ վառին միտք՝ ծխով գինւոյ,  
 որոյ վախճանն՝ անկումն պատուոյ,  
 դնի այն՝ և յելլ շնչոյ:

Այսպէս կեանք են՝ յոյժ խայտառակ,  
 զի Թողուն լոկ՝ զչար յիշատակ,  
 հոգին ստանայ՝ զդառն վիճակ,  
 իւրոյ չարեաց՝ զփոխանակ:

Մարթ է ըմպէլ՝ զսակաւ գինի,  
 ուրխ առնէլ՝ զտրտում հոգի,  
 կամ՝ ՚ի դարման՝ տկարութեան,  
 յոյժ խնամով՝ ըստ քաջ գիտման:

Մի ցանկութիւն՝ վախճոտին,  
 որ տաւիանօք՝ ձգէ առ կին,  
 արկիցէ զքեզ՝ ՚ի գիրկս չարին,  
 ապականէլ՝ զհոգի, զմարմին:

Մի անամօթ՝ լըբի նման,  
 մասներ զքեզ՝ պռոնկութեան,  
 սաստեան կրկնօք՝ ժուժկալութեամբ,  
 վարեան զկեանս՝ պարկեշտութեամբ:

Բարի է յոյժ՝ ամուսնանալ,  
 զի յԱրարչն է սահմանեալ,  
 առնուլ քեզ կին՝ լնկեր կենաց,  
 լինիլ անդամ՝ հասարակաց:

Յընտրէլ քեզ կին՝ լնր դու զգաստ,  
 գտանէլ համետ՝ կին կատարեալ,  
 անկեղծ իցէ՝ սիրտն և հաւատ,  
 պարկեշտ ծնողաց՝ ձեռամբ սնեալ:

Յայս ընտրութիւն՝ վայրկենական,  
 կախին կեանք քոյ՝ մինչ ՚ի վախճան,  
 մի լիցի այն՝ վաղվաղակի,  
 միայն ըսուլ զսէր ցանկութեան:

Մի մոլոր դու՛ ՚ի գեղ նորա.

Թէ և փայլի՛ երբև զարփին.

և մի՛ յինչա՛ ծնողայ նորա.

Թէ և բերէ՛ գանձ բազմագին:

Այս են բարեք՛ մարմնոյ՛ բաղլի.

որոյ վայելք՛ չեն հաւաստի.

եւք նոցա են՛ ատելութիւն.

նախանձ՛ գրգիռ՛ և դառնութիւն:

Սուրբ են կապանք՛ ամուսնութեան.

ամբողջ պահեան՛ զայնս ցլախճան.

մի հաւատոյն՛ երբէք դժբեր.

զոր յունին բազմաց՛ դու յայտնեցեր:

Եւ մի՛ ՚ի վէճ՛ անմիաբան.

քակտեր զձեր՛ սէր միաբան.

զի մի մտցէ՛ ատելութիւն.

բառնալ զձեր՛ խաղաղութիւն:

Զգո՛յշ լերուք՛ և յօտարաց.

որք ՚ի զգեստս՛ գան ոչխարաց.

զամբողջութիւն՛ ձերոց մտաց.

խլել բանիւք՛ հրապուրանաց:

Մտադիր լերուք՛ ժիր և արթուն.

մէն մի առնել՛ զիւր զպաշտօն.

կինն զգօն՛ պահել զտուն.

այրն ջանիւք՛ բերել զարդիւն:

Անշուք անարգ՛ մի լիցի կին.

վարել զնա՛ եբբ աղախին.

այլ կա՛լ զնա քեզ՛ ընկեր բարի.

անլոյծ սիրով՛ միշտ ՚ի պատուի:

Զի նա է մայր՛ քոյ՛ զաւակաց.

և գործակից՛ քոյ առնելեաց.

զի նա է սերտ՛ քոյ սիրական.

և հարազատ՛ խորհրդական:

Նա օրէնսդիր՛ է քոյոյ տան.

և կառավար՛ ընչիցդ համայն.

Թիկն ամուր՛ և ախոյեան.

և աչալուրջ՛ քոյ պահապան:

Կայէք յիրեարս՝ շնորհօք երկնից.  
առնել զձեզ՝ բուն երջանիկ.  
լիջլիք միմեանց ստոյգ պատուակիցք.  
ամուք լծորդք զոյգ աղանիք:

Մի տար տեղի՝ բանից լրբին,  
որ լիտութեամբ՝ զըուցէ ընդ կին.  
զի մի՛ լեղիք՝ շրթանց նորին՝  
ունկամքդ իջցեն՝ ՚ի սիրտ քոյին:

Որով՝ ՚ի քեզ՝ դիւրաւ զարթնուն՝  
բոցք պիղծ ախտիցն՝ եղծիչ հոգւոյն.  
ձգել ՚ի գուբ՝ զքեզ գեհնոյն.  
՚ի կերակուր՝ անչէջ հրոյն:

Եւ մի՛ գարշ դեմք՝ անգգամին.  
հարցեն զակունսդ՝ նետիւ չարին.  
անշուք առնել՝ զքոյ հանձար,  
ձգել զքեզ՝ ՚ի վիճ խաւար:

Յայնժամ չիք դեղ՝ բժշկութեան.  
և ոչ երբէք՝ յոյս փրկութեան.  
կորուստ և մահ՝ են քոյ վախճան.  
և տարտարոս՝ քոյ օթեան:

Իւրք անուշից՝ ախորժե լիք,  
մի՛ լիցին քեզ՝ յոյժ ցանկալիք.  
զի մինչ զգաս դու զհոտ անոյջ՝  
զհոգիդ վնասես՝ ախտիւք քնքուշ:

Զի սա առնէ՝ զքեզ անարի.  
միշտ կալ ՚ի ծոց՝ գրգասիւրի.  
մինչ վառնեալ քո՝ զբարի անուն՝  
զինչա և զկեանս՝ միահաղոյն:

Մի տար զմիտս՝ քոյ ՚ի սնտուս.  
առ ՚ի գիտել՝ զոր ոչ պարտիս.  
որոյ վախճանն՝ ունայնութիւն.  
և կատարեալ՝ յիմարութիւն:

Մի պատկերօք՝ գծող մտայ,  
չարժեր ՚ի քեզ՝ զառիթս մեղայ.  
մերթ զկրիայ՝ զախտ ցանկահան.  
մերթ զհիդրայ՝ զհուր ցասման:

- Երբեմն 'ի բարձր՝ կատար լեբանց.  
 Թափառական՝ զերթ այժեմանց.  
 Երբեմն յանշէնս՝ յանտառ փշոց.  
 տանջեալ մարմննդ՝ զուրկ 'ի պտղոց:
- Մ**ի՛ և զկամս՝ քոյ բարեկարգ,  
 ձգեր 'ի սէր՝ իրայ անկարգ.  
 'ի գործ անգութ՝ և արհամարհ,  
 առնել զբեզ՝ յետին անարգ:
- Կ**ամբ բանաւոր՝ է հզօր իշխան.  
 և օրէնագիր՝ հոգւոյ մեր տան.  
 զոր թէ կապես՝ ընդ սէր աշխարհի.  
 ախտից մարմնոյ՝ առնես գերի:
- Յ**այսժամ մարթ է՝ կրից մարմնական.  
 տիրել հոգւոյդ՝ արքայութեան.  
 'ի կողողտել՝ զգարդ շորհայ.  
 աւեր առնել՝ զբաշխք մտայ:
- Չ**ագահութեան՝ կամս մի՛ տածեր.  
 զախտս մեղայ՝ դու մի՛ սիրեր.  
 այս չար ախտ է՝ հոգեկորոյս.  
 մայր նախանձու՝ աշխարհայոյց:
- Չ**օսկիս զարծաթ՝ նա յոյժ պատուէ.  
 մինչ զի և զկեանս՝ յոչինչ գրէ.  
 սոցա 'ի սէր՝ յօժար մատնէ.  
 զկին և զաւակ՝ եթէ հնար է:
- Չ**իք երկնաւոր՝ յոյս ագահին.  
 զի միշտ հայն՝ 'ի գիրտս երկրին.  
 ընդ որ կապեալ՝ զկամս բանաւոր՝  
 դիւայ գրաւէ՝ գտունս հոգւոր:
- Չ**ի՛ ճշմարիտ՝ հաւատ նորա.  
 զի լոկ պաշտէ՝ զմամոնայ.  
 սէր ընկերի՛ ոչ գոյ 'ի նմա.  
 զի չար կամայ՝ է նա ծառայ:
- Ն**ա մեծեղեւն՝ է անաստուած.  
 վատս յուսահատ՝ լբեալ կորած.  
 ոչ գոն չարիք՝ զորս ոչ գործէ,  
 յանձնանուէր՝ յօժար սրտէ:

Ո՛չ ունի նա՛ զգթութիւն.  
միայն զըրկանս՝ և նենգութիւն.  
խիստ է սրտիւ՝ քան զչար գազան,  
զի՛նչ խնայէ՛ ՚ի կեանս մարդկան.

Անիրաւ է՝ և իւր անձին.  
զի՛ չառնէ իւր՝ յընչիցն բաժին.  
զո՛ւրկ յուտելայ՝ զո՛ւրկ ՚ի բարեաց՝  
լոկ ան, Գոյ են՝ վայելք նորին:

Մինչև զրաւէ՛ նա զկեանս անարգ.  
Թողու զբոլորն՝ ՚ի քանձանակ.  
յայլոյ ծախին՝ ՚ի հանգանակ.  
լոկ մնայ նմա՛ չար յիշատակ:

Հարուստ լինել՝ և դու կարես.  
համեստութեամբ՝ Թէ վաստակես.  
յապրուստ անձին՝ և զաւակին.  
և ՚ի նպաստ՝ կարօտ տնանկին:

Ըս՛ս քոյ լիցի՛ արդարութեամբ.  
՚ի քոյ քրտանց՝ պտուղ օրհնեալ.  
որով լցցի՛ տունդ բարութեամբ.  
զերթ մանանայ՝ յերկնից իջեալ:

Մի սիրեր դու՛ զչա՛ն անիրաւ.  
զերթ զօշաքաղ՝ արծաթասէր.  
չափեա՛ որով՝ քեզ չափեցաւ.  
չնորհեա՛ որպէս՝ քեզ շնորհեցաւ:

Մի տարցի զքեզ՝ սէրն շահուց՝  
յանչուշտ կորուստ՝ ախտին խաղուց.  
որոյ պտուղ՝ Թունով է՛ լի,  
զբազումս արար՝ որորմելի:

Ցայգ և ցերեկ՝ հոգևով մաշին,  
որք սուտ յուսով՝ խաղուց խաբին.  
այնու մոլեալ՝ միշտ զբաղդ փորձեն,  
բայց հիքացեալ՝ անտուն շրջին:

Զի՛նչ գտանեն՝ յոր յուսային.  
այլ Թէ վատնեն՝ զորս և ունին.  
և յուսահատ՝ տրտնջանօք.  
բազում անգամ՝ Թախեն զհոգին:

Քո՛ խաղ լիցի՛ համեստութեան.

սակաւ զբօսնուլ՝ ՚ի լաւ վախճան.

որով միտք քոյ՛ կարի տանջեալ՝

զդիւր գտցէ՛ պատասպարեալ :

Մի՛ և ստացուածքդ՝ ՚ի կիր արկցին,

որպէս սուսեր՝ ՚ի վնաս անձիցն.

ծախել զայնս՝ ըստ անառակին.

գոլ խողարած՝ յագարակին :

Թէ տաս զտուրս՝ ողորմութեան.

մի՛ առներ զայն՝ ՚ի տես մարդկան.

մի՛ ՚ի պատիւ քոյոյ անուան.

մի՛ ահամայ՝ կամ բռնական :

Այլ ՚ի ծածուկ՝ ամենեկին,

միայն ՚ի վառս՝ անուան վէհին.

բղխեալ յառատ՝ գանձուց սրտին.

բաշխել նոցա՝ որոց պիտին :

Մի՛ լիցի այն՝ ինչք օտարին.

զի պարտական՝ գտցիս նմին.

որով լիցիս՝ դու աղքատիկ,

՚ի դրուս այլոց՝ շրջեալ մուրիկ :

Այլ յիսկական՝ քոյոց արդեանց.

և այն կշռով՝ ըստ իրաւանց.

մի՛ առաւել՝ կամ անարժան.

այլ ու՛մ, վասն է՛ր՝ ո՛րով, ո՛րքան :

Եթէ առնես՝ գործ մեծամեծ.

տես զի վախճանն՝ իցէ համեստ.

գործդ, միտքդ՝ միջոցն բարի.

քաղել առատ՝ զօգուտ անտի :

Մի՛ իցէ այն՝ անախառութեամբ.

առնել միայն՝ ՚ի տես մարդկան.

մի՛ իցէ այն՝ անթութութեամբ.

առնել տնանկայ՝ զեղծ յենարան :

Մի՛ ՚ի քո պէտս՝ իցէ միայն.

և կամ որոյ՝ վախճանն ունայն.

այլ քաջախո՛հ՝ գործ գերազանց.

յօգուտ բազմայ՝ ՚ի քոց արդեանց :

Որով ստասպիս՝ զիսաւս անվախճանս  
զանուն բարի՝ քեզ յաւիտեանս  
քոյ յիշատակ՝ միշտ օրհնեսպի  
և յազգայ յազգս երանեսպի

Մի պարապիր՝ ՚ի զարդ՝ ՚ի շպար  
որ է գործ մի՝ բնաւին չար  
զի զգեմս քոյ՝ փոխես յօտար  
զոր ՚ի բնէ անդ՝ դու ընկալար

Մի պարապիր՝ յերգս և ՚ի քնար  
Թէ ոչ իցեն՝ համեստաբար  
զի մի՝ նման՝ համբարուայ  
սուզեսպեն զքեզ՝ ՚ի ծով մեղայ

Մի պարապիր՝ ՚ի տեսարանս  
ուր խաղք լինին թատրոնական  
Թէ ոչ լիցին՝ բարոյական  
ամբէլ զսիրտդ՝ յօգուտ մարդկանս

Մի պարապիր՝ առ խեղկատակս  
որք լրբութեամբ՝ ՚ի ծաղը շարժեն  
մի՝ անամօթ՝ նոցին կատակք  
զոգջամիտ սիրտդ՝ աղտեղեսպենս

Մի տար տեղի՝ դու փափկութեանս  
կամ մարմնաւոր՝ պիղծ հեշտութեանս  
զի մի՝ նոցին՝ վայելք անբան  
լիցին գործի՝ քո կորստեանս

Քոյ համեստ վարք՝ քեզ զարդ լիցի  
և շպարումն՝ քոյ գործ բարի  
որով ցուցպիս՝ դու յաշխարհի  
հրեշտակ երկնից՝ ՚ի քում մարմնի

Քոյ երգ և քնար՝ իցէ բնական  
ձայնք թռչնոցն՝ զմայլողական  
յորդոր առ երգ՝ սաղմոսական  
քեզ շնորհօղ՝ զկենացի բան

Քոյ տեսարան՝ թատրոնական  
լիցի աշխարհս՝ ւորք ՚ի նա կան  
խաղք ՚ի նմա՝ արարք մարդկան  
այլ բանաւորն՝ և ոչ անբան

- Բոյ ծաղրածու՝ և խեղկատակ,  
 լիցին գնացք՝ անմիտ մոլեայ,  
 զքեզ արդէ լուլ՝ առ գործ անարդ,  
 զի մի՛ անկցիս՝ ՚ի ծով մեղայ:
- Եւ փափկութիւն՝ բան հոգևոր,  
 ածել զքեզ՝ ՚ի յերկնաւորս,  
 և հեշտութիւնն՝ գործ բանաւոր,  
 շարժել զկիրսդ՝ առ հոգևոր:
- Ա**պա լուր դու՝ ՚ի վերջ բանիս,  
 առ ստեղծողն մեր՝ զքո պարտիս,  
 որոյ շնորհօքն՝ դու կեաս, ապրիս,  
 և ոյր բարեօքն՝ ցնծաս բերկրիս:
- Մ**ի լիցին քեզ՝ աստուածք օտար,  
 բայց որ արար՝ զերկինս, զաշխարհ,  
 զզարդ նոցա՝ զլոյս, զխաւար,  
 և զգոյս համայն՝ կարողաբար:
- Ի**քնագոյ է՝ նա ինքնիշխան,  
 միայն ստեղծող՝ էից համայն,  
 անսկիզբն է՝ սկիզբն բոլորից,  
 և անլախճան՝ վախճան էից:
- Ն**ա է տիրող՝ ամենայնի,  
 հզօր՝ կարող՝ անբաւելի,  
 երկինք, երկիր՝ հողմունք, անդունդք,  
 են գործք նորա՝ սքանչելի:
- Ն**ա տայ զկեանս՝ ամենեցուն,  
 նովաւ շարժի՝ բոլոր բնութիւն,  
 չիք ինչ որ կեայ՝ առանց նորա,  
 կամ որ իւրեաւ՝ իսկ զարգանայ:
- Ա**ռ հասարակ՝ ՚ի խնամն նորա՝  
 անկեալ տածին՝ գթով նորա,  
 ամենողորմ՝ նորին բնութիւն,  
 տայ հաւասար՝ զարժանն նոցա:
- Չ**իք ինչ անտես՝ յաչայ նորին,  
 կամ ո՛չ կամօք՝ եղեալ նորին,  
 ո՛չ խորք խորոյ՝ վիճք անդնդոյ,  
 ո՛չ վայրբ ծածկեալք՝ տեղիք ստորին:

Երկինք, աստեղք, արև, լուսնակն,  
Երկիր, լեռինք, դաշտք և անտառք,  
ձառք, դալարիք, միրգք, մանուշակ,  
ձով և աղբիւրք, գետք և վտակք:

Լոյս և խաւար, և բանաւորք,  
գազանք, սողունք, և թեւաւորք,  
Տողունք, անկրողք, անձրև և ցօղ,  
կարկուտ և ձիւն, տարաւի Տասօղ:

Ինքն է ստեղծող ամենայնի,  
յամենեսեան՝ մասն իւր Տղի,  
ամենատես՝ ամենուրեք,  
ամենայն ինչ է նմա յայտնի:

Արդ սիրեա՛ դու՝ զԱրարիչ քո,  
'ի խոր սրտէ՛ յաննենգ մտաց,  
կապեա՛ 'ի նա՛ զկամն քոյ,  
յօժարելով՝ գործոյ բարեաց:

Մի անարգեր՝ զպատիւ նորա,  
որ արար զքեզ՝ 'ի պատկեր իւր,  
մի՛ մոռանար՝ զճնորհս նորա,  
որ շնորհեաց քեզ՝ զբարես իւր:

Դու պատուականն՝ յարարածոյ՝  
իշխան և գլուխ՝ բնաւ եղելոյ,  
'ի քեզ միայն՝ օրինակին՝  
որ ինչ յերկրէ՛ որ ինչ յերկինս:

Պան քո են՝ գիշեր և տիւ,  
Երկինք, երկիր՝ Տանդերձ լիւ,  
գործել պահել՝ Տանգչիւ, յաւնել,  
կեալ և բերկրիւ՝ և վայելել:

Սրբեա՛ զսիրտ քոյ՝ զՏոգիդ ուղղեա՛,  
և գրեա՛ 'ի միտս՝ զօրէնս նորա,  
անկեղծութեամբ՝ զնա պաշտեա՛,  
և զանուն իւր՝ սրտիւ օրհնեա՛:

Յուսա՛ 'ի նա՛ որ արար զքեզ,  
որոյ աւանց՝ կեալ ո՛չ կարես,  
նա ինքն է քո՛ սկիզբն և վախճան,  
նովաւ շարժիս՝ կեաս և քայլես:

Նա տայ զչնորհս՝ խոնարհ անձանց՝

և բնակի՝ յոգիս հեզոց.

օգնական է՝ իւր սիրելեաց,

հայր բարեգութ՝ տառապելոց:

Նա հոգայ զքո՝ պիտոյս համայն.

նա պատրաստէ՝ քեզ լի սեղան.

զոր ինչ ունիս՝ և վայելես.

այնք քեզ շնորհօք՝ նորին տուան:

Չաղերս սրտի՝ քո լուրելայն՝

արկ առաջի՝ նորա միայն.

նա է աղբիւր՝ ողորմութեան.

որ լնու զքոյ՝ կամս առժամայն:

Թողու զմեղսդ՝ սրբէ զքեզ.

ածէ՝ ի կեանս՝ պսակէ զքեզ.

փրկէ զոտըս՝ քոյ՝ ի չարեաց.

և ի հաղբից՝ անօրինաց:

Թէ քում եղբօք՝ դու ոչ ներես,

ոչ զնեբումն՝ յէէն գացես.

թէ բաղխեսցես՝ քեզ ոչ թացցի.

զի ոչ բանաս՝ դուռն ընկերի:

Չար նախանձու՝ ատելութեամբ.

խուռլութեամբ՝ կամ բարկութեամբ.

խարդախութեամբ՝ դժբողութեամբ.

տրտնչանօք՝ տժգոհութեամբ:

Չայս կիրս՝ ի քէն՝ ի բայ քերեա.

տուն Աստուծոյ՝ զքեզ կազմեա.

տաճար բանին՝ զքեզ մաքրեա.

սիրով հոգւոյն՝ զքեզ վառեա:

Եթէ իցես՝ յանդունդս խոր,

կարէ զքեզ՝ ի վեր բերել.

և թէ՝ ի ծով՝ ի կիտին փոր,

կարէ զքեզ՝ ի լոյս հանել:

Դաւանեա՝ զՏէր՝ դու ճշմարտիւ՝

ստեղծող քո՝ և բարերար.

երկրպագեա՝ նմա ահիւ.

զի նա է Տէր՝ ուղիղ պրդար:

Լիցի հաւատ՝ քոյ հաստատուն.  
բարի գործով՝ պայծառ փայլուն.  
ի շինութիւն՝ եկեղեցւոյն.  
և վասն հոգւոյդ՝ ՚ի փրկութիւնս:

Ձերկիւղ Տեառն կա՛լ՝ քեզ պահպան.  
երբեք չառնել՝ զբան չարութեան.  
և գէն նորին՝ արդարութեան.  
զգեցիր ընդդէմ՝ չար մոլութեան:

Չանիրաւել՝ չանօրինել.  
չչարախօսել՝ չբամբասել.  
ո՛չ սուտ վկայել՝ ո՛չ զլուրարտել.  
ո՛չ կաշառել՝ ո՛չ ագահել:

Ո՛չ ամբարշտել՝ ո՛չ ստուռգանել.  
ո՛չ նախատել՝ ո՛չ անարգել.  
ո՛չ ատել կամ՝ թշամանել.  
ո՛չ հարկանել՝ ո՛չ սպանանել:

Ո՛չ հպարտանալ՝ ո՛չ բարկանալ.  
ո՛չ բռնանալ՝ ո՛չ ռխանալ.  
ո՛չ նախանձիլ՝ ո՛չ զչարել.  
ո՛չ զլանալ՝ և ո՛չ հետտել:

Ո՛չ շուայտիլ՝ ո՛չ արբենալ.  
ո՛չ պռոնկիլ՝ ո՛չ ֆողանալ.  
և այլ բազումք՝ սոցին նման.  
զորս ՚ի գործել՝ ո՛չ է արժան:

ԱՏա՛ քեզ կեանք՝ երանութեան.  
որում մարդիկ՝ ըղձիւ տենչան.  
որոյ ելք են՝ փառք անխախձան.  
հաղորդութիւն՝ անմահութեան:

Ուրեմն զգեցիր՝ դու զգաստ հոգի.  
չկորուսանել՝ զբո բուն վիճակ.  
յոր համբարձեալ՝ յերկրէ աստի՝  
յերկինս ստասցիս՝ զխառս և զպսակ:

Այս բանք էին՝ իմ ունայ չին.  
որք սիրով՝ յունկն՝ իմ հնչէին.  
բայ ես հետտեալ՝ խրատուց նորին՝  
արկի զանձն իմ՝ ՚ի գերիս չարին:

Չերկիւղ Տեառն՝ զարդարութիւն.

զահ և զամօթ՝ զսրբութիւն.

ի բայ ետու՝ յինէն ողջոյն.

բարձաւ և իմ՝ խաղաղութիւն:

Ուր եհաս ինձ՝ բան հրամանին.

զոր քարոզէ՝ բերան Փրկչին.

թէ որ գիտէ՝ և ոչ առնէ.

արբայէ նա գան՝ խիստ դառնագին:

Չի ձեռն հզօր՝ ահաւորին.

յանկարծ փակեայ՝ զխորան վերին.

զի լոյս մտայս՝ եղև մթին.

եհաս երեք՝ ինձ կայենին:

Տազնաղ մտայս՝ վերք ի հոգի.

սիրտ յուսահատ՝ կեանք ատելի.

վարանք՝ սարսափ՝ ահ խաւարի.

տխուր պատկեր՝ և ողբալի:

Նկարք չարեայն՝ զորս գործեցի.

միշտ ի միտքս՝ ինձ երեւին.

և որպէս զքարք՝ յոյժ թունաւոր.

թափեն յոգիս՝ զթոյն մահածին.

ո՛ր ե հանգիստ կամ նինջ աչայ.

և կամ դադար՝ յուզմանց ներքին.

զի հանապազ՝ ցաւք նորանոր՝

սաստիկ տանջեն՝ խայթիւք խղճին.

և իբր որդունք՝ բազմամոռնոք՝

կան յիս արթուն և խլրտին:

Բիւր երանի՝ անձինս տայի.

թէ մարդ երբեք՝ ծնեալ չէի.

այլ ճիւղաղ ինչ՝ կամ հրէշ անարգ.

զի յիմ խղճէ՝ ոչ նեղէի.

ոչինչ տանջանք՝ կամ վերք մահու.

կարծեմ իցեն՝ այնքան հատու.

որքան պատիժն՝ մեղաց գործեալ.

յորում մնամ՝ արդ բեւեռեալ.

որ հեշտութեանց՝ իմ արժանի.

որով մարմնոյս՝ ծառայեցի:

Ո՛վ դու անձրն՝ իմ մեղապարտ.  
 զի՛ տրանջես՝ կամ զի՛ է քեզ.  
 ո՛չ ապաքէն՝ քոյ իսկ ձեռամբ  
 ետուր բերել՝ զմահ առ քեզ.  
 ասան ընկալ՝ զարդիւնս գործոցդ՝  
 փուշ և տատասկ՝ լեալ քեզ վճար.  
 և զպտուղ՝ գործեալ մեղացդ՝  
 որ է անմեռ՝ մահ չարաչար.  
 զի ստունգանօղդ՝ արդարութեան՝  
 ուղիղ կշռու՛լ փոխան գայես:

Չմտաւ չածեր՝ զքոյ լաւ վիճակ.  
 Թէ մարդ ես դու՝ հոգւոյ ունակ.  
 որ զԱրարչիդ՝ բերես ՚ի քեզ՝  
 զպատկերի զտիւղ՝ և զօրինակ.  
 զորս թաղէցեր՝ ՚ի տիղմն խոր.  
 այժմ շրջիս մերկ՝ խայտառակ.  
 արդ յո՛ւ երթաս՝ ո՛ւր որոնես.  
 զճար անձինդ՝ ո՛վ անառակ.  
 զի հասեալ կայ՝ վճիռ արդար.  
 վճարել քեզ՝ ըստ գործոցդ անարգ:

Անլուր եղեր՝ իմաստութեան.  
 որ հանապաղ՝ զքեզ խրատէ.  
 քանզի ասէ՝ ո՛վ ամբարիշտ՝  
 եթէ արդարն՝ հազիւ կեցցէ.  
 ասն զտեղի՝ մեղուցելոյդ.  
 Թէ արդեօք ո՛ւր՝ կամ ո՛ր վայր է.  
 ասան այժմ՝ դու՛ լայ և ողբան.  
 զի քոյ տեղին՝ տարտարոնն է.  
 յորում չիք ինչ՝ բայց աղճամուղջ.  
 որ իսպառ քեզ՝ տիրելոյ է:

Ահա՛ լուարնէք՝ անգգ երկրածինք.  
 զանձին զյաւս՝ որք աստ պատմին.  
 որ անհամար՝ գործոցն չար.  
 արդարադատ՝ փոխան հասին.  
 զի ՚ի Հօրէն՝ որ ՚ի յերկինս.  
 ոչինչ գործք մեր՝ երբէք ճամկին.

քանզի արդար՝ նորին բնութիւն՝  
տայ ըստ գործոյն՝ զորս գործեցին՝  
եթէ բարի՝ տայ զբարին.

իսկ եթէ չար՝ տայ չար նոյին:

**Ն**ա միշտ խրատէ՝ զմեղուցեալն՝  
որպէս գթած՝ հայր զիւր որդիին.

մերթ ամե լով՝ թեթև հարուած.

մերթ զկորուստ՝ ընչից նորին.

գուցէ թերևս՝ նա զգաստասցի.

առ ՚ի ուղղէ՛լ՝ զընթացս անձին.

սպա թէ ոչ վայ՝ է նմին.

զի ծանրասցի՝ պատիժ նորին.

այսպէս և ինձ՝ բազում անգամ.

սզգ եղև քաղցր՝ խրատ նորին:

**Բ**այց ես նման տղմախիրին.

զիս խոր թարեալ՝ մեղաց յախտին.

մնացի անշարժ՝ ՚ի կանս չարին.

մեղս բազումս՝ կուտեալ յանձին.

սհաս եհաս՝ և ինձ պատիժ,

ըստ գործոյ ձեռացս՝ որք գործեցին.

այլէ տք և ցաւք՝ անբուժելիք.

եղծողք հոգւոյս՝ մաշողք զմարմին.

զորս լալով այժմ՝ ճառեւ փութամ.

յօգուտ հոգւոյ՝ իմ ընկերին:

**Ծ**նունդք չարին՝ յիս բազմացեալ՝

աւերել զիմ՝ քաղաքս կամին:

**Ջ**ինև պատեալ՝ շուրջանակի՝

զմեքենայս՝ լարել կամին:

**Զ**օր ամենայն՝ զողջոյն՝ գիշեր՝

երբէք հանգիստ՝ տալ ինձ չկամին:

**Ջ**ի գունդագունդ՝ յիս յարձակին.

գրոհ տուեալ՝ տիրել կամին:

**Զ**սուրբ նշանն՝ զտիպ հզօրին՝

եղծանել յիս՝ իսպառ կամին:

Ոսկե՛ ճաճանջ՝ իմ՝ լապտերի՝  
շիջուցանե՛լ՝ զլոյս կամին։  
Զսեղան կարգեալ՝ առ Հայրն Աստուած,  
և զսուրբ տաճարս՝ այրել կամին։  
Զփառատրութիւն՝ առ միածին,  
իսպառ լռել՝ տալ ինձ կամին։  
Զսէր սուրբ Հոգւոյն՝ զՏաւառ զլոյս իմ՝  
յինէն՝ ՚ի բայ՝ վտարել կամին։  
՚ի սննդեանէ՝ երկնաւոր Տօրն,  
զիս զտածեալս՝ արդ խլել կամին։  
Զգնեալս արեամբ՝ Որդւոյ նորա,  
միւսանգամ՝ գերել կամին։  
Եւ ՚ի շնորհաց՝ Հոգւոյն սրբոյ,  
մեկնել, օտար՝ առնել կամին։  
՚ի հաղորդեց՝ սրբոյ ուխտի,  
զիս ընկենու՛լ՝ զատել կամին։  
՚ի գաւիթըս՝ տան Տեառն անկեալս,  
արմատախիւ՛լ՝ առնել կամին։  
Զսահման և զկարգ՝ հոգւոյս մասանց,  
բնաւ վայր՝ ՚ի վեր՝ առնել կամին։  
Զխոհեմ միտս՝ և զազատ կամս,  
յետին ծառայ՝ առնել կամին։  
Խանգարելով՝ զգարդ խորանիս՝  
իսպառ անշուք՝ առնել կամին։  
Եւ զկիրս մարմնոյ՝ թունով չարին՝  
՚ի կամս իւրեանց՝ շրջել կամին։  
Որովք նիւթեալ՝ զբազում չարիս,  
զոգիս թափել՝ յինէն կամին։  
Նախ սուտ երկիւղ՝ և զարհաւիրս,  
յիմ՝ մո՛ւժանել՝ ՚ի սիրտ կամին։  
Ապա պէսպէս՝ զնորիւք ասեղ,  
զիս ըմբռնել՝ խոռովել կամին։  
Զչորս իշխանս՝ տան իմ՝ հոգւոյ,  
անտի ՚ի բայ՝ ձգել կամին։  
Որոյ փոխան՝ զչար իշխանս,  
զբէլիար՝ կարգել կամին։

Յորմէ անբաւ՝ չարիս ծնեալ՝  
մեղօք ընուլ՝ զանձն իմ կամին:

Որովք իսպառ՝ զիս նուաճեալ՝  
տանեւ ձգել՝ ՚ի դժոխս կամին:

Այժմ ճար քո անձն՝ իմ՝ տառապեալ՝  
է մաքրել զմեղսդ՝ բազմապիսի.  
և ոչ գործել զոր գործեցեր.  
ներհակ կամայ՝ քո Արարչի.  
և զանբոյժ զգաւ՝ զոր արդ դու կրես,  
դնել առաջի՝ Հօրն երկնի.  
որ է բժիշկ՝ ամենակար.  
կարօղ՝ հզօր՝ ամենայնի.  
նա քաւէ զեղս՝ քո հայրաբար.  
բժշկէ զգառդ անտանելի:

Յայլմէ ոչ գոյ՝ քեզ դեղ բուժիչ:  
որ կարիցէ՝ զքեզ բուժել.  
բայ ՚ի նմանէ՝ որ ետ քեզ զկեանս.  
և միշտ կամի՝ զայն պահպանել.  
եթէ անկեզ՝ դարձցիս առ նա,  
բեկեալ սրտիւ՝ խոստովանիլ.  
Թէ և ՚ի խորս՝ իցես դժոխոց.  
չէ՛ դժուարին՝ նմա հանել.  
զհանգիստ սրտիդ՝ զկամս բերկրեալ՝  
և զմտոս խաղաղ՝ ՚ի քեզ հաստել:

Առ քեզ դառնամ՝ Աստուած հզօր.  
Տէր և հաստիչ՝ երկնի և երկնից.  
միայն պահօդ՝ զբոլոր տեսակս.  
՚ի քէն ստեղծեալ՝ ՚ի յոչ գոյնց:

Քաւեա՛ զիս արդ՝ յանթիւ մեղաց.  
զորս խորհեցայ՝ յիմում՝ սրտի.  
և զձեռացս՝ զչարութիւնս  
զոր արարի՝ իմ՝ ընկերի:

Եւ զիմ աչացս՝ չարակնութիւն՝  
ընդդէմ՝ եղբարց՝ ինձ սիրելեաց.  
և զոտիցս՝ անուղղութիւնս  
որ հանին զիս՝ ՚ի քոց շաւղաց:

Ձամբարտաւան՝ վարս գարշելի՝  
 յոյժ չարաշունչ՝ հողմով փքայեալ՝  
 սպառեան Տէր՝ քով զօրութեամբ.  
 զհօգի խոնարհ՝ յիս հաստատեալս :

Ձագահութիւն՝ աւելորդին,  
 յինէն ջնջեան՝ իսպառ մաքրեալ.  
 և զսէր անսուրբ՝ ցանկահանին,  
 յինէն շիջո՛ սուրբ սէր տուեալս :

Ձբնութիւն՝ գազանահան,  
 որ զիս առնէ՝ շուն կատաղի  
 սանձեան գթան՝ քո քաղցր բնութեամբ.  
 տալով զբնութիւն՝ հեզ և բարի :

Եւ զծուլութիւն՝ շարժող ախտին,  
 ՚ի բաց վանեան՝ տիրօղբ սրտի.  
 զանառակ վարս՝ ներհակ կամայութի.  
 փոխեան ՚ի գնացս քեզ հաճելի :

Ընորհեան ինձ Տէր՝ զարիութիւն.  
 ընդդիմանալ չար կրից սրտի.  
 և բարեխառն՝ շափ ուղղութեան,  
 կշռել զհաճոյս՝ մարմնահանի :

Մի բնաւ թողցես՝ զիս կորն չիլ.  
 ողորմանդ՝ ամենեցուն.  
 քաւ մի լիցի՝ ներող բնութեանդ.  
 բաժին հրոյ՝ տալ իմ հոգւոյն :

Ի ջերմ սրտէ՝ առ քեզ դիմեմ.  
 լալով խնդրեմ՝ զիմ հայցելին.  
 բազմամեղիս՝ Տէր ողորմեան.  
 և լէր քաւիչ՝ ամբարշտիս :

Ու ծագես զլոյս՝ ՚ի խաւարի.  
 ծագեան Տէր զայն՝ յանձն իմ մթին.  
 որով միտք իմ՝ լուսաւորեալ,  
 լոյս տայէ յիմ՝ խաւար անձին :

Ջի նուլաւ իմ՝ առաջնորդեալ.  
 յօրէնս քո սուրբ՝ պատուիրանին,  
 յար պահեցից՝ զբան հրամանիդ,  
 շարդարութիւնդ՝ զգենուլ յանձինդ :

Չի մի՛ խաւար՝ այս աշխարհիս  
 տայե ինձ քաւ՝ ՚ի գուբ տղմինս  
 և մի՛ հոռի՛ իմ անարգեալ,  
 արկից՛ յանչէջ՝ հուր գեհեմինս:  
 Զողորմութեանդ՝ դուռն բայ ինձ Տէ՛ր:  
 վասն Բրիտանոսի՛ Տեառն մերոյ,  
 ողջայն՝ զցաւս՝ անբուժելի,  
 ծախիչ հոգւոյ՛ եղծիչ մարմնոյ:  
 Արդ փութա՛ Տէ՛ր՝ ինձ յօգնութիւնս:  
 Եւ լմ՛ վրկիչ՝ յայց վասնգից,  
 հար դու սրով՝ զջոկս չարինս,  
 հան զրաս իմ՝ յրոգայթից:  
 Դիր պահապան՝ զուրբ հրեշտակդ,  
 ինձ օգնական՝ և մարտակիյ,  
 և ձեռն քոյ՛ բարձր և կարող  
 տայես լինիլ՝ իմ կուսակից:  
 Չի կարայից՝ զտից հզօրիդ,  
 անեղձ պահել՝ յամենայն ժամ:  
 Եւ զգայճառ զլոյս՝ իմ լապտերի,  
 անչէջ պահել՝ յամենայն ժամ:  
 Զսեղան քո սուրբ՝ և բնակարան,  
 մաքուր պահել՝ յամենայն ժամ:  
 Զերգ և զքնար՝ և զդոհութիւնս,  
 անլու պահել՝ յամենայն ժամ:  
 Զսեր սուրբ հոգւոյդ՝ զհաւատ զլոյս իմ:  
 անխախտ պահել՝ յամենայն ժամ:  
 Ի՛ խնամոյ՛ երկնաւոր շօրդ,  
 մի՛ ելե ինձ՝ իսպառ զրկիլ:  
 Գնե՛ լոյս արեամբ՝ որդւոյ քոյինս,  
 չիցե՛ կրկին՝ գերի լինիլ:  
 Ի՛ շնորհաց՝ սրբոյ շողոյնս,  
 և ՚ի սուրբ ուխտե՛ չիցե՛ յեանիլ:  
 Տնկե՛ ել լոյս՝ ՚ի սուրբ տան բում,  
 մի՛ ելե ինձ՝ ՚ի բաց խիլ:  
 Զարդու հոգւոյս՝ ՚ի քէն շնորհեալ,  
 մի՛ ելե Տէ՛ր՝ իսպառ խամբիլ:

Կրից մարմնոյս՝ ընդդէմ հոգւոյս  
մի տար յինչն ապստամբել:

Չի մի հոգւոյս՝ տան և տերանց՝  
առ ի՞նչ լիցի՝ ի կողմանիլ:

Ախտից մեղաց՝ իմոյ անձինս  
մի իցէ այլ՝ բնաւ հետեւիլ:

՚Ի կամաց քոյ՝ և յերկիւղէ,  
մի՛ իցէ ինձ՝ ՚ի բաց լինիլ:

՚Ի շաղկայ քոյ՝ արդարութեան,  
մի՛ իցէ ինձ՝ ՚ի բաց փախչիլ:

Եւ մի՛ զօրէնսդ՝ ճշմարտութեան,  
չարեօք յինչն՝ ՚ի բաց վանել:

Այլ տուր ինձ Տէ՛ր՝ քեզ զօրսմալ,  
զչարին հնարս՝ առ ոտն կոխել:

Ազատ կամօք՝ մաքուր մտօք,  
և սուրբ հոգւով՝ առ քեզ դիմել:

Ընդ հոտ անոյշ՝ անեղծ փառաց,  
Ժառանգութեան՝ արժան լինել:

՚Ի կեանս անմահ՝ ՚ի յարկս վերինս,  
յարբայութեանդ՝ օթեանիլ:

Եւ ընդ սրբոցդ՝ ալլառ ձոյնիւ,  
զքեզ միշտ օրհնել՝ փառաւորել:

ԵՐԿ ԱՍՏՈՒԱԾ

**ՏԵՐ** ամենակալ՝ Աստուած բոլորից.

ստեղծող երկնից՝ և երկրի՝ ի յանգոյից.  
միսբանեալ զանմիաբան՝ տարերս քառից.  
՚ի ծնունդ ւաճումն՝ գոյայեղոցս բնաւից.  
Զօրութիւն քո՝ անբաւելի.

սովաւ հռչակեալ՝ յար փառաւորի.  
զի՛ քաղցր խնամք քո՝ յամենայնի,  
լստ արժանեայլն՝ բաշխեալ տեսանի.  
որոյ և առանց՝ չէ ինչ կենդանի:

**Ինքնաբուն բարի՝ բաշխողդ բարեաց.**

որ խնամես՝ անբաւ բարեօք՝ զքո զարարածս.  
արդ խնամես՝ Տէր՝ զիս զանկեալս և զարտալած.  
և արձակես՝ զմերօք կապեալս՝ ո՛վ իմ Աստուած,  
Առեան լուսով՝ բանիդ շնորհաց,  
զճրագ հոգւոյս՝ իմ խաւարած.

որով ուղղեալ՝ զիմ հետս շաղաց.  
ելից առ լոյսդ՝ վերին յարկաց.  
վայելել զփառսդ՝ անմահ կենաց:

**Եիցս Եակ՝ որ Էնն Աստուած.**

՚ի յանէից էացուցեալ՝ զէակս ջնչին.

զոր զարդարեալ՝ պէտպես վառօք՝ քոյ շնորհաց՝  
ածեր յաշխարհ՝ և զազատ կամն՝ ետուր նմին.

Ես զգարդ իմ՝ ՚ի քէն շնորհած,

աղտեղեցի՝ յախտս մեղաց.

զիշխող բնութիւնս՝ ետու չարին կամաց.

որով գլորեցայ՝ յանդունդս խոր մեղաց:

յոր այժմ՝ ճածանիմ՝ որպէս նա՝ ՚ի ծիսանաց:

**Ի վեր հան զիս ո՛վ՝ Տէր կարողագոյն.**

առ լոյսդ վերին՝ ՚ի խորոց աստի՝ մեղացս անհռն.

քեզ չէ՛ դժուարին՝ եթէ կամիս՝ այլ գիւրագոյն.

դու որ բառնաս՝ զմէզ գիշերոյն՝ ճագմամբ արիւոյնս:

Հայցեմ ձեռն տալ՝ քոյդ փոքր Տօսին  
 փրկել յալեաց՝ մեղացս ծովին.  
 զի մի՛ եղէց կուր՝ չար վիշապին.  
 որ տարեալ ձգեսցէ՝ զիս՝ ի ծոց դժոխոց.  
 անդ եղիցի ինձ՝ խաւարս սուգ ողբոց:

ԵՐՔ ՈՌՈՒՄԵՔ ԵՐՔՐՐՐՐՈՒԼԷՆՆԵՑ:

**Գ**երագոյն Էդ՝ Հայր անասման.  
 դու զօրութիւն՝ անչափական.  
 Տասաիչ ինամիչ՝ Տամայն բնութեան.  
 և կեցուցիչ՝ Տոգոց մարդկան:  
 Էացերոյս՝ տուիչ բարեաց,  
 ՚ի քէն Տայցեմ՝ զձերս շնորհաց.  
 և զթողութիւն՝ իմ՝ յանցանաց,  
 զի օրհնել զքեզ՝ պատրաստեցայց:  
**Ո**րդիդ Աստուած՝ ծնունդ անճառ.  
 միածին Տօր՝ անՏատաբար.  
 զերկրպագուս՝ անուան քում՝ յար՝  
 պահեան ինամով՝ քով տիրաբար:  
 Բենական քում՝ ձայնի կոչման,  
 զիս լսելոյ՝ արն արժան.  
 ՚ի միւսանգամ՝ քում՝ գալստեան.  
 Տանգչիլ ՚ի կեանս՝ երանական:  
**Գ**ետ յորդաբուղիս՝ իմնատութեան.  
 Հոգիդ անեղ՝ անՏասական.  
 Տեղ ՚ի Տոգիս՝ շնորհդ եօթնարիւեան.  
 զքեզ օրհնել՝ գուլ ինձ արժան:

Handwritten text at the top of the page, appearing to be a list or index of items.

Handwritten title or section header in the middle of the page.

Main body of handwritten text, possibly a list or detailed notes, with some lines appearing to be crossed out or heavily faded.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or date.











